



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀՕԿ-Ի ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ

Ե-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

S. M. DEMURJIAN  
223 East 75th Street  
New York 21, N. Y.



Յուլիս 2 - 4

1932

ՏԻԹՐՈՅԹ, ՄԻՇԻԿԸՆ

361  
2.24

361  
2-24

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՕԿ-Ի ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ

6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Յուլիս 2 - 4

1932

ՏԻԹՐՈՅԹ, ՄԻՇԻԿԸՆ

ՀՕԿ-ի Ամերիկայի Շրջանի 6րդ Համագումարը բացեցաւ Շարաթ, Յուլիս 2, կէսօրէ վերջ ժամը 3.40-ին:

Տիթրոյթի ՀՕԿ-ի Գաղվարչի քարտուղար ընկ. Գ. Աւագեան բարի գալուստ մաղթեց պատգամաւորներուն: Կեդրոնական Վարչութեան քարտուղար ընկ. Յ. Պայտարեան պաշտօնապէս ժողովը բացաւ ուղերձով մը:

Ընտրեցաւ ժամանակաւոր ղեկան մը հետեւեալ ընկերներէ. Գեւորդ Մ. Գանձանակեան՝ ատենապետ, Ներսէս Փիլիկեան՝ քարտուղար:

ՀՕԿ-ի Կեդրոնական Վարչութեան Նախագահ ընկ. Լեւոն Գազանձեան, որ հիւանդութեան պատճառով կը բացակայէր, զրկած էր գրաւոր ղեկոյց մը, որուն ընթերցումը խանդավառութեամբ ընդունեցաւ Համագումարի կողմէ:

Ուղերձներ եղան ՊՀԿԽ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ ընկհ. Վ. Ծովիկեանի, Թոմարզայի Միացեալ Ընկերութեան ներկայացուցիչ ընկ. Լեւոն Պոյաձեանի, Շիքալոյէն՝ ընկհ. Վեհանոյշ Ասատուրեանի եւ «Բանուր»ի Բարեկամներու Միութեան ներկայացուցիչ ընկ. Պ. Սելեանի կողմէ:

05 JUN 2013

42.900

Առաջարկեցաւ եւ միաձայնութեամբ ընդունեցաւ ողջոյնի հեռագիրներ զրկել ՊԿՀԽ-ի Համագումարին, որ տեղի կունենար նոյն ատեն Պոսթոնի մէջ, ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութեան, Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհին եւ ընկ. Լ. Գաղանձեանին:

Համագումարի սլաւոն նախագահներ ընտրեցան ընկերներ Սահակ Տէր Գաբրիէլեան - Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի Նախագահ, Ա. Խանջեան - Հայաստանի Կոմունիստ Կուսակցութեան Քարտուղար, Յ. Ստալին - Խորհրդային Միութեան Կոմունիստ Կուսակցութեան Քարտուղար, Արմէն Անանեան - Խորհրդային Հայաստանի Կեդրոնական Գործադիր Կոմիտէի Նախագահ եւ Անդրկովկասեան Ֆեաերացիայի Կեդրոնական Գործ. Կոմիտէի հերթական Նախագահ, Լ. Կարախան - Խ. Միութեան Արտաքին Գործերու Արեւելեան Բաժնի Կոմիսար, Դ. Շահ-վերդեան - Խ. Հայաստանի Արտասահմանեան Ներկայացուցիչ եւ Ներգաղթի Արտակարգ Յանձնախմբի Լիազոր Ներկայացուցիչ, Արամայիս Երզնկեան - Անդրկովկասեան Խորհրդային Ֆեաերացիայի Երկրագործական Կոմիսար, Միկոեան - Խ. Միութեան Արտաքին Գործերու Կոմիսար:

Պատգամաւորներու Ստուգիչ Յանձնախմբի անդամ ընտրեցան ընկերներ Արտավազ Զթէեան, Աւետիս Խանձեան եւ Գրիգոր Եսայեան:

Քարտուղար ընկ. Յ. Պայտարեան կարգաց Կեդրոնական Վարչութեան մէկ տարւա գործունէութեան շեկոյցը եւ թելադրութիւնները:-



70140.68

ՏՄՐԵԿԱՆ ԶԵԿՈՅՑ ՀՕԿ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ, ՆԵՐԿԱՅԱՅԻԱՍԾ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Ընկերներ,

ՀՕԿ-ի Վեցերորդ Համագումարը պիտի արձանագրէ կարգ մը նւաճումներ: Նւաճումներ, որոնք անհրաժեշտ հիմունքներ ստեղծած են ՀՕԿ-ը իսկապէս զանդւածային կազմակերպութիւն մը դարձնելու մեր հետագա գործունէութիւններուն համար:

Մէկ տարւա ընթացքին, որ երկար ժամանակամիջոց մը չէ, մեր մասնաճիւղերու թիւը բարձրացաւ 38-էն 55-ի, անդամներու թիւը 1000-էն 1600-ի: Ունեցանք նաեւ երկու Կրտսերաց Լիկաներ, իսկ Բէյ-սինի ՀՕԿ-ի մասնաճիւղի նախաձեռնութիւնով կազմուեցաւ ՀՈԿՏԵՄ ԲԵՐԻԿՆԵՐՈՒ խումբ մը, որուն անդամները դպրոցական աշակերտներ լինելով՝ կարճատեւ ժամանակեան մը մէջ անոնց թիւը 12-էն բարձրացաւ 21-ի:

Այս յաջողութիւնները կը պարտինք նախորդ տարիներու մեր ինքնաքննադատական առողջ վերաբերումին եւ այն հանգամանքին, որ մենք առաջնորդելով այդ ինքնաքննադատութեան տւեալներով, սրբազրած ենք շատ մը սխալներ, որոնք մեր շարժման ծաւալման ճանապարհի վրա խոչոր խոչընդոտներ էին: Եթէ ոչ բոլոր խոչընդոտները, դոնէ հիմնականները մենք յաղթահարեցինք եւ այժմ աւելի վստահութեամբ մենք կարող ենք նայիլ մեր ապագա կարելութիւններուն վրա, ճրագրել եւ անցնիլ գործի:

Ընկերներ, մենք մէկ տարւա մեր նւաճումները կատարած ենք քաղաքական եւ տնտեսական շարք մը պայմաններու տակ, որոնցմով չըջապատուած ենք:

Մեր բոլոր յաջողութիւններն ու թերութիւնները երաշխաւորեա՞ծ են այդ պայմաններու ճշգրիտ կամ սխալ ըմբռնումով: Հետեւաբար լաւագոյնս ըմբռնելու համար մեր յաջողութիւններն ու թերիւնները եւ ըստ այնմ՝ անհրաժեշտ միջոցները կիրարկելու՝ մեր թերիւններու վերացման համար, կարելո՞ր է աչքի առաջ ունենալ քաղաքական ու տնտեսական պայմանները, եւ Հայ դադութիւններու մէջ յառաջացած ուժերու նոր դասաւորումը:

Մեր ապրած ներկա շրջանը ծանօթ է որպէս համաշխարհային տնտեսական ճգնաժամի շրջան: Համաշխարհային՝ այն իմաստով, որ այս ճգնաժամը կ'ընդգրկէ ու կը սեղմէ իր երկաթէ բազուկներուն մէջ բոլոր դրամատիրական երկիրներն ու զադութային եւ կիսազադութային երկրամասերը, բացի աշխարհի մէկ վեցերորդ երկրամասէն, որ կը կոչւի Սորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութիւն, որու համադօր մէկ անդամն է Սորհրդային Հայաստանը, ադատ է տնտեսական ճգնաժամէ, եւ ուր՝ ո՛չ անգործներ կան եւ ո՛չ թշուառներ, ուր սոցիալիզմը կը կառուցւի աննախընթաց թափով եւ պատմութեան մէջ չտեսնուած եռանդով ու կորովով: Սորհուրդներու երկիրը դարձեր է ԱՇՍԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ԵՐԿԻՐ:

Համաշխարհային ճգնաժամը կը բոլորէ իր երրորդ տարին: Ոչ միայն ամենաչնչին չափով չիրականացան 60 օրէն դէպի բարգաւաճում վերադարձի բոլոր հաւաստիացումները, այլ ճգնաժամը երթալով ալ աւելի կը խորանա: Եթէ 1925-ի արդիւնաբերութիւնը համարինք 100, ապա կը տեսնենք, որ Գերմանիայի մէջ այդ թիւը իջած է 31-ի, Անգլիայի մէջ 93-ի, իսկ Միացեալ Նահանգներու մէջ 68-ի: Բոլոր դրամատիրական երկիրներու մէջ արտադրու-

թիւնը իջած է միջին հաշուով 82-ի: Մինչդեռ, վերջին 9 տարեան ընթացքին, Սորհրդային արդիւնաբերութիւնը աճած է տարեկան միջին հաշուով հարիւրին 32.5: Աւելի լաւ դադափար կազմելու համար այն տեղաշարժի մասին, որ համաշխարհային արտադրութեան մէջ տեղի կունենա, մէկ կողմէ Սորհրդային Միութեան եւ միւս կողմէ դրամատիրական երկիրներու միջեւ, նկատի առնենք նաեւ հետեւեալը:—

1928-ի համաշխարհային արտադրութեան մօտ 53.5 տոկոսը տւած են Միացեալ Նահանգները, 14 տոկոսը Գերմանիան, 12 տոկոսը Անգլիան եւ 5 տոկոսը Սորհրդային Միութիւնը: 1931-ին սակայն, Միացեալ Նահանգները տւած են մօտ 49 տոկոսը Գերմանիան մօտ 12 տոկոսը, Անգլիան 10 տոկոսը եւ Սորհրդային Միութիւնը 11.5 տոկոսը: Ազգերու Լիկան անգամ պարտաւրլած է ընդունիլ, որ այսօր Ս. Միութիւնը համաշխարհային արտադրութեան մէջ Միացեալ Նահանգներէն անմիջապէս յետո կուգա: 46 դրամատիրական երկիրներու մէջ անդործներու ընդհանուր թիւը կը հասնի 48,000,000-ի, որ մէ Միացեալ Նահանգներու մէջ կան 15 միլիոն, Գերմանիայի մէջ 8 միլիոն, Անգլիո մէջ 3,200,000, Ճափոնի մէջ 2,600,000, Իտալիո մէջ 2,000,000 եւ Ֆրանսայի մէջ 2 միլիոն: Անդործութեան աճման մասին զադափար մը տալու համար ըսենք, որ Միացեալ Նահանգներու մէջ 1929-ին անգործներու թիւը կը հաշուէր 7 միլիոն, իսկ այժմ այդ թիւը աւելի քան կրկնապատկւած է: Անգործութեան յարատեւ աճման դէմ Ս. Միութիւնը կը հակադրէ բանուորական ուժի յարատեւ եւ արագաթափ աճումով, որ կը համապատասխանէ երկրի սոցիալիստական արդիւնաբերութեան սրարշաւ Վերելքին: 1929-ին Ս. Միութիւնը ունէր 12.5 միլիոն բանուորներ եւ ծառա-

յողներ, 1930-ին 14,600,000, 1931-ին 18 միլիոն: Այս տարի, Հնդամեակի Չորրորդ եւ աւարտական տարին, միլիոնաւոր նոր մարդիկ պէտք է ընդգրկւին արդիւնաբերութեան մէջ:

Ինչպէս սուր կերպով դուած է դրամատիրական արդիւնաբերական դրութեան քայքայման եւ սոցիալիստական արդիւնաբերական դրութեան հզօրագոր վերելքի հակասութիւնը, նոյնպէս սուր կերպով է դուած դրամատիրական երկիրներու բանւորական զանգուածներու ապրելու չափանիշի յարատեւ անկման եւ Խ. Միութեան բանւորութեան բարօրութեան աճման հակասութիւնը: 1931-ին բանւորական աշխատավարձը կրճատուած է Գերմանիո մէջ 25 տոկոս, Անգլիո մէջ 20 տոկոս, Ճափոնի մէջ 35 տոկոս, Ճրանսայի մէջ 12 տոկոս, Միացեալ Նահանգներու մէջ 30 տոկոս: Համաշխարհային չափանիշով աշխատավարձի համատարած այս կոտորածին համեմատենք այն իրողութիւնը, որ Խ. Միութեան մէջ միեւնոյն տարին աշխատավարձը բարձրացած է 18 տոկոս: Այս տարի Միացեալ Նահանգներու մէջ աշխատավարձի կրճատումը կը հասնի 55 տոկոսի, մինչդեռ Խ. Միութեան մէջ բանւորները 11 տոկոս նոր յաւելում կ'ստանան:

Խ. Միութեան մէկ անդամն է նաեւ փոքրիկ Խորհրդային Հայաստանը, ուր սոցիալիզմի կառուցման նւաճումները ա'լ աւելի ցցուն կերպով աչքի կը զարնեն: Այս երկրամասը ցարական բռնապետութեան ամենայետամնաց մէկ ծայրագաւառն էր, եւ ցարերէն մնացած այդ յետամնացութիւնը Դաշնակցական կառավարութիւնը ա'լ աւելի խորացուց եւ երկիրը վերածեց համայնատարած աւերակոյտի մը, մինչեւ ա'յն աստիճան, որ Հայաստանի բովանդակ բնակչութեան զոյւլութիւնը վտանգի ենթարկւեցաւ եւ

անոր սպառնաց ամբողջական բնաջնջում: Այսպիսի պայմաններու տակ, Հայաստանի յեղափոխական բանւորներու, զիւղացիներու եւ զինւորներու կամքով հաստատուելով Խորհրդային Իշխանութիւն, անոր 12 տարեա ղեկավարութեան ընթացքին միայն հնարաւոր եղաւ բնակչութիւնը փրկել բնաջնջումէ, երկիրը դուրս բերել աւերած-վիճակէն եւ վերջնագոյն ութ տարեան ընթացքին երկրի ժողովրդական տնտեսութիւնը հասցնել նախապատերազմական շրջանի չափանիշին եւ գերազանցել զայն, ստեղծելով անհրաժեշտ հիմունքները սոցիալիզմի հիմքի կառուցման՝ առաջին Հնդամեա ծրագրով եւ անցնիլ սոցիալիզմի շէնքի կառուցմանը՝ Երկրորդ Հնդամեա ծրագրով:

Խ. Հայաստանի ժողովրդական տնտեսութեան մէջ արդիւնաբերութիւնը այս տարի արդէն կը կազմէ 52 տոկոս: Այդ կը նշանակէ, որ ցարական կայսրութեան յետամնաց ծայրագաւառը արդէն իսկ դարձած է արդիւնաբերական - զիւղատնտեսական երկիր: Արդիւնաբերութեան ընդհանուր արտադրանքը 1931-ին եղած է 79,383,000 ռուբլի, որ բաղադրամբ 1930-ի արտադրութեան, 47 տոկոս աւելի է: Այս տարի Խ. Հայաստանի արդիւնաբերութիւնը պէտք է տա 144,000,000 ռուբլի արտադրանք, որ նախորդ տարեան հետ բաղադրամբ, 87 տոկոս աւելի է: Աճման այս թափը միանգամայն պատասխան է առաջին հերթին դաշնակցականներուն եւ ապա Խ. Հայաստանի բոլոր թշնամիներուն, որոնք կը բարբառեն, թէ Խ. Հայաստանը Խ. Միութեան ամենանախնտեւած Հանրապետութիւնն է: 1930-ին Խ. Միութեան ամբողջ արտադրութիւնը միջին հաշուով ցայց տուած է՝ 21 տոկոս աճում, Խ. Հայաստանի արդիւնաբերութիւնը տուած է 47 տոկոս աճում, իսկ

1932-ին կը նախատեսուի 36 տոկոս Խ. Միութեան համար, մինչդեռ 87 տոկոս Խ. Հայաստանի համար: Առաջին Հնգամեա ծրագիրը կը նախատեսէր Անդր-կովկասի բովանդակ արդիւնաբերութեան զարգացման համար 59 տոկոս, Վրաստանի տարով 50 տոկոս, Ատրպեյճանին 52 տոկոս, իսկ Հայաստանին 76 տոկոս: Այս թիւերը պերճախօսօրէն ցոյց կուտան, թէ Խ. Միութեան մէջ առանձնաշնորհեալ ազգեր եւ հանրապետութիւններ չկան եւ Խ. Միութիւնը անհրաժեշտ ուշադրութիւն կը դարձնէ ամէն մէկ Հանրապետութեան, իր կարելիութիւններուն եւ կարիքներուն համաձայն: Մինչ Խ. Միութեան եւ Խ. Հայաստանի թշնամիները Հնգամեա Ծրագիրը մտացածին ցնորք մը կը յայտարարէին, այս թիւերը ցոյց կուտան, որ ոչ միայն Հնգամեայ Ծրագիրը կ'իրագործւի շուրս տարւան մէջ, այլ կը գերակատարւի Խ. Միութեան մէջ ընդհանրապէս եւ Խ. Հայաստանի մէջ մասնաւորապէս:

Մինչ մէկ կողմէն դրամատիրական երկիրներու մէջ արդիւնաբերութիւնը դէպի քայքայում կը յառաջանա, միւս կողմէն Խ. Միութեան մէջ արդիւնաբերութիւնը գլխի պտոյտ պատճառող վերելք կունենայ: Անհատական գիւղատնտեսութիւնը, որու մասին մեծ յոյսեր կը տածէր համաշխարհային դրամատիրութիւնը՝ իր զինեալ միջամտութեան եւ հակայեղափոխական քաղաքացիական կռիւններու ծրագիրով, սկսած է արագ թափով անհետանալ, տեղի տալով հաւաքական տնտեսութիւններու, լիակատար հաշւեյարդարի ենթարկելով քուլաքուլութիւնը՝ որպէս դասակարգ: Խ. Միութեան հացահատիկային եւ Խ. Հայաստանի բամպակացան շրջաններուն մէջ, կարելի է ըսել թէ համատարած հաւաքականութիւնը իրականութիւն է, իսկ երկրորդ Հնգամեա Ծրագիրը

կը յառաջադրէ կապիտալիստական տարրերու մնացորդները ջնջել մարդկանց մտայնութենէն եւ ստեղծել անդասակարգ հասարակութիւն:

Խօսելով Ներգաղթի մասին, Ընկ. Սահակ Տէր Կարբէշեան յայտարարեց, որ «Անոր անմիջական զբոսապատճառը կը հանդիսանա մէկ կողմէն բուռն տնտեսական վերելքն ու բարգաւաճումը, որ կ'ապրի մեր երկիրը, եւ միւս կողմէ այն անտանելի ծանր կացութիւնը, որուն մէջ կը գտնուի դրամատիրական երկիրներու աշխատաւորութիւնը:

«Ինքնին պարզ ու հասկնալի է, որ Խ. Հայաստանի Կառավարութիւնը չէ կարող հնարաւորութիւն չընձեռել արտասահմանի աշխատաւորութեան որոշ հատւածին, այդ կացութենէն դուրս գալու այնքանով, որքան որ գոյութիւն ունին անոր համար անհրաժեշտ պայմաններ»:

Դրամատիրական երկիրներու արդիւնաբերութեան քայքայման եւ Խորհրդային արդիւնաբերութեան բուռն վերելքի հակասութիւնով ալ պայմանաւորուած է հակա-խորհրդային պատերազմի վտանգը, որ այսօր դրւած է այնքան սուր կերպով, որ սեւէ մէկ բուստ կարելի է սպասել յարձակում մը Խորհրդային սահմաններուն վրա Մանչուրիայէն, ուր ճափոնական նաճողական բանակները Խորհրդային սահմանագլխէն քանի մը մղոն միայն հեռու են, եւ Լեհաստանի կամ Ռումանիայի ճակատէն, ուր ֆրանսական բարձրագոյն հրամանատարութեան տակ եւ Զօրավար Փիլսոուսքի ընդհանուր ղեկավարութեան տակ Լեհ-Ռումանական բանակները պատրաստ են կրակելու Խ. Միութեան յեղափոխական բանւորներու եւ գիւղացիներու վրա: Դրամատիրներու միակ էլքը ճգնաժամէն, պատերազմէն է: Պատերազմ՝ զոր անոնք կուզեն մղել Խ. Միութեան դէմ, նպատակ ու-

նենալով անոր հաշոյն լուծել իրենց մէջ եղած հա-  
կասութիւնները :

Դաշնակցականներու գլխաւորութիւնով Հայ ազ-  
գայնականներու տարած հականերգաղթ դաւադրու-  
թիւնները, Սիւրբիո մէջ գաղթականներ տեղաւորելու  
կամ դէպի Սուրիա արտագաղթ ստեղծելու պարա-  
զան սերտ կերպով կապած են դրամատիրական եր-  
կիրներու հակա-խորհրդային պատերազմի դաւադը-  
րութիւններուն հետ : Ոչ ոքի գաղտնիք է, որ դաշ-  
նակցութիւնը սպիտակ բանակայիններու Հայկական  
ջոկատը լինելով՝ կը մտնէ նւաճողական պետութիւն-  
ներու լրտեսական ցանցին մէջ : Գործիչի տեղեկա-  
գրէն կը տեղեկանանք, որ Կրէնտ Բէփիտզի մէջ ՀՕԿ  
-ի մասնաճիւղը քանդած է դաշնակցականներու եւ  
Բարեգործականներու մատնութեանց պատճառով ու  
հնարաւորութիւն չկայ մասնաճիւղը վերակազմելու ,  
անոնց միացեալ ահաբեկումին տակ : Անոնք կը դի-  
մեն ամենաաղոտոտ գէնքին՝ ՀՕԿ-ը հարածելու հա-  
մար, այն է՝ ամենէն առաջ մեր ընկերները գործէ  
զրկել, մատնելով գործարանատիրոջ, եւ անոնց դոր-  
ծունէութեան շարունակման պարագային՝ մատնել  
ոստիկանութեան : Վոքեկընի մէջ կացութիւնը  
նոյնն է : Վէսթ Փուլմէնի մէջ միեւնոյն պատճառով  
մեր մասնաճիւղը չէ կարող ծաւալիլ, թէեւ կա ան-  
նախընթաց հետաքրքրութիւն դէպի Ս. Հայաստան :  
Դաշնակները ահաբեկումի միեւնոյն քաղաքականու-  
թեան հետեւեցան Ինտիանա Հարպըրի մէջ, ձերբա-  
կաշէլ տալով ՀՕԿ-ի գործիչը երկու տարի առաջ,  
բայց խիզախ եւ աներկիւղ զանդաճային աշխատան-  
քը սրարտութեան մատնեց դաշնակցական թերորը եւ  
այդ գաղութին միակ կազմակերպւած ուժը - դաշ-  
նակցութիւնը - վերածւեցաւ չնչին արժէքի մը : Միւս

Ֆողմէ ՀՕԿ-ի կողքին կազմւեցաւ Պետ. Հայ Կարմիր  
ձաչի մասնաճիւղը :

Արշակ Չոպանեանի, Ռամկավար - Ազատականու-  
թեան անխտելի առաջնորդի՝ Ռուսմանիո թագաւո-  
րի կողմէ շքանշանով վարձատրելի սովորական երե-  
ւոյթ չէ : Արշակ Չոպանեան իր յարգանքներու եւ  
«Հայ Ժողովուրդի հաւատարմութեան» հաւաստիքը  
կը մատուցանէ «Հայասէր» Երկային, ա'յն մար-  
դուն, որ Տնիէսթէրի արիւնոտ դաւադրութիւնները  
կը կազմակերպէր, միջոց գործածելու համար քու-  
լաքային տարրերու փախուստը՝ Ս. Միութեան դէմ  
զինեալ յարձակումի մը համար, ճիշդ այնպէս, ինչ-  
պէս դաշնակցականները «Չափահաս Որբեր»ը կը  
մտցնէին Ներգաղթի կարաւանին մէջ, նախապէս ծը-  
րագրելով անոնց փախուստը՝ Արաքս գետը ճեղքե-  
լով՝ դէպի Պարսկաստան, որպէսզի միջոց ծառայե-  
ցնեն զայն Ներգաղթէն հեռու պահելու Յունաստանի  
եւ Սիւրիայի գաղթականները, ստիպելով զանոնք  
տեղաւորելու Թրքական սահմանագլխի վրա :

Թէ, Ռամկավարները, Դաշնակցականները եւ  
Հնչակեանները կատարեալ հակցողութիւն ունին  
հակա-խորհրդային պատերազմի մը պարագային Հայ  
աշխատաւորութիւնը թնդանօթի միս ծառայեցնելու  
եւ գործածելու զայն Ս. Միութեան դէմ, այդ ալիւն-  
րեւ է ամենէն առաջ այն փաստով, որ դէպի Սիւրիո  
արտագաղթը կը կազմակերպէր դաշնակցական քա-  
ղաքական ղեկավարութիւնով եւ Բարեգործականի  
նիւթական միջոցներով : Վերջինը՝ մի քանի ամիս ա-  
ռաջ, յանձնառու եղաւ Ֆրանսական կառավարու-  
թեան միջոցով 75,000 տոլար յատկացնել Սիւրիական  
արիւնոտ ծրագրին, իսկ անկէ առաջ արդէն ծախսած  
էր 100,000 տոլար : Մինչ մէկ կողմէն Բարեգործա-  
կանը Սիւրիոյ մէջ հայ աստանդական զանդաճները



կը հաստատէ, միւս կողմէ՝ կը զլանա Նուպարաչէնի համար հաւաքած հարիւր հազարաւոր տղարները Խ-Հայաստան փոխադրել եւ կը պահէր զանոնք մինչեւ վերջերս Գարակէօզեանի առեւտուրին մէջ: Երեւոյթները փրկելու համար, այժմ Նուպարաչէնի համար հանգանակած դումարները փոխադրւած են Փարիզ: Այս դումարները տակաւին կը պահւին Փարիզի մէջ, մինչ Խորհրդային Հայաստանի Կառավորութիւնը մէկ միլիոն ըուրլի կը յատկացնէ Նուպարաչէնի կառուցումներուն համար:

Ռամկավարները, որոնք՝ մինչեւ վերջերս, իրենց հակա-խորհրդային դէմքը զանգւածներէն ծածկելու համար դէմ կը խօսէին եռագոյնին եւ Մայիս 28-ին, այս տարի հրապարակ եկան յանուն եռագոյնի եւ Մայիս 28-ի: Փարիզի Ռամկավար պաշտօնաթերթ «Ապագա»ն, ընկ. Շահվերդեանի դէմ պատրաստւած դաշնակցական արիւնոտ մահափորձը պաշտօնապէս իր հովանաւորութեան տակ առաւ Արշակ Չոպանեանի ստորագրութիւնով, յայտարարելով, որ այդ միայն կոմունիստներու գրգռութիւն է եւ թէ կոմունիստները դատապարտելի են, որ եռագոյնը վար առնելու փորձ են ըրած, եռագոյնը, որ «Ազգային» խորհրդանիշ է: Իսկ Մայիս 28-ի առթիւ այս տարի Ռամկավար այդ միւսնոյն պաշտօնաթերթը կը գրէ. «1918 Մայիս 28 պատմական խոշորագոյն քաղաքացիական պայքարի տարեգրութեան մէջ: Հայաստանի անկախութեան հռչակման օրը կը համարուի Մայիս 28-ը»:

Իսկ նոյնքան ռամկավար անգամ մը եւ Բարեգործականի Գաղթականաց Յանձնաժողովի քարտուղարը, որ Ազգերու Լիկայի Նանսէնեան Գրասենեակի մօտ Բարեգործականի ներկայացուցիչն է, եւ Բարեգործականի զբամով հրատարակող «Լր Գաղթ»

թերթի խմբագիրը, Լեւոն Փաշայեան, Ապրիլ 24-ի առթիւ կը գրէ. «Որքան աւելի ճիշդ պիտի ըլլար տօնել Սարտարապատը (փոխանակ Խանասորի), ուր՝ մեր ցեղը իր հայրենի հողին վրա, դիմադրութեան հրաշալի թափով մը ծառայած, կրցաւ օրհասական դիմադրութիւն մը ընել թշնամիին, անոր վազքը խորտակել եւ փրկել Հայ հայրենիքը եւ հայութիւնը: Մեր ազգին եւ նորածին պետութեան (Միացեալ անկախ Հայաստան ըսել կուզէ) սահմանման գերագոյն եւ յաղթական ճիգն է, որ ազգային տօնի մը ամէն հանդամանքները ունի իր մէջ, Վարդանանց փառաւոր տօնին պէս»:

Ահա Բարեգործականը, Ռամկավար - Ազատական կուսակցութեան հրամանատարական գլխաւոր այդ զօրակայանը իր ամենապատասխանատու պաշտօնէի բերնով, ինչպէ՛ս կը ձգտի ոգեկոչել դաշնակցական արկածախնդրութիւնները, որպէս «Հայրենիք»ի եւ «Ժողովուրդ»ի փրկութեան դիւցաղներգութիւններ: Արկածախնդրութիւններ, որոնք հարիւր հազարաւոր հայերու փճացումովը վերջացան: Այդ միւսնոյն «Լր Գաղթ»ն կոչ կընէր իր ռամկավար եղբայրներուն, որ չի քաջալերեն դաշնակցութենէն անջատող հատւածները, այլ ուժ տան դաշնակցութեան:

Պօղոս Նուպար - Քիրիլ համաձայնութիւնը, որ մերկացեցաւ Արաբական «Էլ Ահրար» թերթին կողմէ, ոչ մէկ կասկած կը թողու, թէ ռամկավար եւ բարեգործական առաջնորդները դաշնակցական առաջնորդներու հետ կողք կողքի կանգնած են սպիտակ բանակայիններու շարքին մէջ, եւ քրտական շարժումներուն ուժ կուտան Խորհրդային Միութիւնը հարւածելու համար, թէեւ անոնք չեն համարձակիր իրենց իսկական դէմքը ցոյց տալ եւ յաճախ կը հարւածեն քրտական շարժումը եւ դաշնակցութեան

կապակցութիւնը անոր հետ:

Գալուստ Կիւլպէնիկեանի հրատարականք եւ զայն հակա-խորհրդային գրգռութեան նիւթ ծառայեցնելու ազգայնական մամուլի միահամուռ ջանքերը եւ Բարեգործականի Կեդրոնական Վարչութեան այդ առթիւ ընդունած բանաձեւ - որոշումը աւելորդ անգամ մըն ալ որոշ կերպով երեւան բերին, որ Գալուստ Կիւլպէնիկեան դաշնակներու բարեհաճ հաւանութիւնով եւ հնչակներու գետնամած հաճութիւնով ընդունած էր Բարեգործականի նախագահի պաշտօնը, որպէս գլխաւոր միջնորդ նաճողական պետութիւններու մօտ հայ աշխատաւորութեան արիւնը սակարկելու:

Ուշագրաւ երեւոյթ է նաեւ, որ այս տարի ռամկավարները դաշնակներու հետ միատեղ տօնեցին Ապրիլ 24-ը, որ նպատակ ունի հայ աշխատաւորութեան մէջ պատերազմական տրամադրութիւններ ստեղծելու: Սակայն ուշագրաւ է նաեւ գաղութահայ աշխատաւորութեան աճող պայքարը Ապրիլ 24-ի դէմ: Սեւանիկի մէջ, Ապրիլ 24-ի օրութիւ, գաղթականները ոտնակոխ ըրին եռագոյնը: Այստեղ Ամերիկայի մէջ Ապրիլ 24-ը շատ մը գաղութներու մէջ, ինչպէս Լին, Լորէնս, Հոփուէլ, Փրեզնօ եւլն., ստացաւ հակապատերազմական կորովի ցոյցի հանգամանք 204-ի մասնաճիւղերու նախաձեռնութեամբ եւ շնորհիւ «Բանուր»ի տարած լայն փրփակահանտային, որ օրէ օր եւ անողորձէն մերկացուց ազգայնականներու բանւորաբաւ եւ հակախորհրդային բոլոր դաւադրութիւնները, ծանօթացնելով Ապրիլ 24-ի իսկական իմաստը:

Այս բոլորով միասին, սակայն, Ապրիլ 24-ը չկարողացանք կազմակերպել համազգաղութային չափունիչով: Մեր շարք մը աչքի դարնող մասնաճիւղե-

7040-69

ըը, ինչպիսին են Տիթրոյթ, Ծիքափօ, Նիւ Եորք, Լոս Անճելըս, եւլն., կամ բոլորովին անտես ըրին եւ կամ անհրաժեշտ միջոցները ձեռք չառին իրենց շարքերը շարժման մէջ դնելու ընդէմ համաշխարհային նոր սպանդի եւ յանուն Սորհրդային Հայրենիքի պաշտպանութեան: Պէտք է ընդունիլ, որ Կեդրոնն եւս թերացաւ կանխօրէն անհրաժեշտ ուրազներ հայթայթելու, ինչպէս նաեւ, նախա-Ապրիլեան դասախօսութիւններ եւ կարծիքի փոխանակութիւններ կազմակերպելու մասնաճիւղերու մէջ, որ անհրաժեշտ էր 204-ի անդամները շարժման մէջ դնելու, որպէս Ս. Հայաստանի պաշտպանութեան առաջաւոր չոկատ: Այն փաստը, որ Բէյքիւնի մէջ դաշնակ - հնչակ - եկեղեցական միացեալ ճակատը չկարողացաւ գոնէ երկու տասնեակ մարդիկ ժողովի տանիլ, ցոյց կուտայ, որ հակապատերազմական Ապրիլ 24-ը 204-ի նախաձեռնութեամբ խոշոր յաջողութիւններ կը խոստանար: Այդ ապացոյցը կուտայ նաեւ այն փաստը, որ Լինի մէջ 204-ը միացեալ ճակատ կազմեց շարք մը հայրենակցական եւ հասարակական կազմակերպութիւններու հետ եւ ժողովը յաջողութեան առաջնորդեց:

204-ի աօրեա գործերու եւ պայքարներու մէջ չենք կրնար անտեսել մամուլի կատարած դերը: Ազգայնական մամուլը կ'աշխատի իր ցանցին մէջ որսալ աշխատաւորութիւնը երբ ան տակաւին քունի մէջ է: Դաշնակցական «Հայրենիք» առաջին էջին վրա հրակա վերտառութիւններով կը հրատարակէ Չինաստանի սպիտակ բանակայիններուն կոչը՝ որ կը յորդորէ բոլոր հաճոյքներէն զրկելու եւ դրամական օժանդակութիւն փութացնել Մանչուրիո մէջ համախմբող սպիտակ բանակայիններուն, որոնք պատրաստ են յարձակելու եւ յոշտելու Ս. Միութիւնը: Ծարու-



նակարար Խ. Հայաստանի հանդէպ բարեկամական զգացմունքներ արտայայտող ուսուցիչական «Պայքար»ը Մեկիբբատէ ստորագրութիւնով յօդածներ կը հրատարակէ, Խ. Միութիւնը եւ անոր արդիւնաբերական վիթխարի վերելքը հարւածելու համար: Այդ յօդածներէն մէկուն մէջ ուսուցիչական թերթը բացայայտ կերպով կ'արդարացնէ Վրաստանի մենչեւիկեան «կառավարութեան» արտասահմանեան գոյութիւնը Փարիզի մէջ, դատապարտելով Խ. Միութիւնը՝ Վրաստանի անկախութիւնը բռնաբարած ըլլալու գրպարտութիւնով: Միւս կողմէ անուղղակի կերպով իր ընթերցողներուն կ'ուզէ հասկցնել, որ «Միացեալ Անկախ Հայաստանի Պատերազանութիւն»ը եւս իրաւունք ունի գոյութիւն ունենալու եւ հետապնդելու Հայաստանը «բռնաբարած» անկախութիւնը: Աւելի առաջ ուսուցիչական թերթը փաստեցին այդ իրենց գործով: Բարեգործականի Փարիզի մատենադարանի բացման առթիւ հրատարակելով «Միացեալ Անկախ Հայաստան»ի պատերազանութեան պետ Աղեքսանդր Խատիսեանը, որ բացայայտ կերպով կը սիրաբանէ ցարական բարձրաստիճան զինուորականներու եւ դուքսերու հետ: Ուրիշ յօդածով մը Մեկիբբատէն ջանք չի խնայեց համոզելու համար ուսուցիչական թերթի ընթերցողները, որ Խորհրդային արդիւնաբերութիւնը «ոսկումնակա՛ն դիտաւորութիւններով միայն կը զարգանա» եւ կ'սպառնա՝ ամբողջ աշխարհի խաղաղութեան: Բոլոր սրտով Խ. Միութեան յաղթանակ ցանկացող «Պայքար»ը կը հրատարակէ յօդածներ, որոնք Խ. Միութիւնը կը դատապարտեն պատերազմի պատրաստուելու գրպարտութիւնով եւ կ'արդարացնեն Ֆաշիստներու եւ սոցիալ Ֆաշիստներու այն յայտարարութիւնը, թէ «Եւրոպա չի կրնար զինաթափ ըլլալ, որքան ատեն, որ Խ.

ութեան կողմէ յարձակման վտանգը կա, կամ որքան ատեն, որ Խ. Միութիւնը կ'սպառազինուի»: Խ. Միութեան քաղաքականութիւնը այսօր ոչ ոքի գաղտնիք է; մինչեւ անգամ ամենայնապահական տարրերը եւ Խ. Միութեան ամենաոխիրմ թշնամիները պարտաւորած են ընդունիլ, որ պատերազմը արդէն իսկ սկսած կըլլար Մանչեսթրի մէջ, եթէ Խ. Միութիւնը յամառօրէն իր խաղաղասիրական քաղաքականութեան կառչած չըլլար: Բոլորին յայտնի իրողութիւն է՝ առ հասարակ ամբողջ ազգայնական մամուլի եւ մասնաւորապէս դաշնակցական թերթերու այն տարածայնութիւնները, թէ Խ. Միութիւնը ամբողջապէս կը գոցէ իր շարք մը մեծ գործարանները եւ այս տարի աւելի քան չորս միլիոն բանուորներ փողոցները պիտի նետուին, հետեւաբար Ներգաղթը պիտի դադարի եւ Հայաստան մեկնողները պիտի մատնուին անօրինակ թշուառութեան: Այս խօսքերով անոնք կրնան միայն հաւատացնել այն մարդիկ, որոնք տակաւին չեն դիտեր Խորհրդային եւ դրամատիրական արդիւնաբերական դրութեանց տարբերութիւնը: Խորհրդային արդիւնաբերութեան թափը չէ կարող կասիլ, այլ ընդհակառակը ալ աւելի կը զօրանա, որովհետեւ արդիւնաբերութիւնը կը զօրանա այնտեղ, ոչ թէ արտաքին շուկայի եւ շահագիտակցան կարելիութիւններու նպատակով, այլ երկրի աշխատաւորական բնակչութեան կարիքները բաւարարելու: Իսկ այդ կարիքները շատ մեծ են եւ Խորհրդային արդիւնաբերութիւնը զարգացման հսկայական կարելիութիւններ ունի: Իսկ անգործութիւնը միայն դրամատիրական արդիւնաբերութեան անիշխանական բնոյթէն եւ անհատական շահ արտադրելու հայեցակէտէն կը յառաջանա: Խորհրդային արդիւնաբերութիւնը, որ զանդամներու սեփականութիւն

նրն է եւ կը դարգանա անոնց հետագա բարորութեան տւեալները նկատի առնելով, անգործներու բանակներ երբէք չ'ստեղծեր: Ներգաղթողները ոչ թըշտաւ են եւ ոչ ալ թշտութեան մատնելու երկիւղը կա: Այս զգելի գրգռութիւնէն քանի մը շաբաթ յետո միայն, Հայաստան կը մեկնի Չորրորդ կարաւանը եւ Ընկ. Դ. Շահվերդեան կոչ կընէ ներգաղթի յանձնախումբերուն օժանդակել Ս. Հայաստանի բնակարանային շինարարութեան, Ներգաղթը աւելի լայն չափով շարունակելու համար:

Այս բոլորը կը ցուցնեն, թէ «Բանուր»ը որքան խոշոր գեր ունի կատարելիք Ամերիկայի մէջ, որ ան միակ թերթն է՝ անկեղծօրէն եւ ամբողջապէս նւիրուած Ս. Միութիւնն ու Ս. Հայաստանը ծանօթացնելու եւ զանգւածները Ս. Հայրենիքի պաշտպանութեան համար կազմակերպելու: Առանց տեղն ու տեղը մերկացնելու ազգայնական մամուլի հակախորհրդային գրգռումներն ու սուտերը, առանց օրը օրին ջախջախելու անոնց հակախորհրդային դաւադրութիւնները, մենք չենք կրնար ՀՕԿ-ը եւ Պետ. կարմիր թաշը դարձնել զանգւածային կազմակերպութիւններ եւ ուժեղ գործօններ՝ Ս. Հայաստանի սոցիալիստական շինարարութեան եւ անոր նւաճումներու պաշտպանութեան համար: Այս տեսակէտէն մեզի համար վերին աստիճանի կենսական նշանակութիւն ունի «Բանուր»ի մղած արթուն պայքարը՝ ընդդէմ հայ աշխատւորութեան եւ Ս. Հայաստանի թշնամիներուն: Այն հանգամանքը, որ մեր համագումարի նախօրեակին «Բանուր»ը լայնօրէն տրամադրեց իր էջերը համագումարի խնդիրները զանգւածներու սեփականութիւն դարձնելու եւ կարծիքներու լայն փոխանակութիւն կազմակերպելու, կը ցուցնէ, որ «Բանուր»ը միակ թերթն է, որ հետա-

քրքրուած է եւ անվերապահօրէն նւիրուած ՀՕԿ-ի եւ Պետ. Հայ կարմիր թաշի ծաւալման: Այս տարի մենք չկրցանք օգտուիլ «Բանուր»ի տւած պատեհութենէն եւ մեր շարքային ընկերները չի մասնակցեցան կարծիքներու փոխանակութեան: Փափաքելի է, որ ՀՕԿ-ի քաղաքականութիւնը՝ նոյնինքն իրենք՝ զանգւածները կերտեն: Այս տեսակէտէն անհրաժեշտ է, որ գալ տարի աւելի մեծ թւով ընկերներ մաս վերցընեն կարծիքներու փոխանակութեան մէջ:

ՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՍԿԱՆ ՆԻԱՃՈՒՄՆԵՐՆ

ՈՒ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.- Մեր Անդամական Քեմփէյնը

Անցեալ տարի, ՀՕԿ-ի անդամական երկու քէմփէյնները մեր կազմակերպութեան մէջ բերին 600 նոր անդամներ, փոխան հազարի: Բաւական խոշոր թւով մասնաճիւղեր կամ բոլորովին չի մասնակցեցան այս քէմփէյններուն, եւ կամ իրենց տրւած քոթային հազիւ մէկ քառորդը կրցին լրացնել: Միւս կողմէ Յիւրտեթիան, Տիրպորնը եւ Յրեզնոն գեղազանցեցին իրենց տրւած քոթաները եւ շահեցան մրցանակներ, չնորհիւ իրենց կատարած հաւաքական աշխատանքին: Միւս մասնաճիւղերու ձախողութեան համար երեք լուրջ պատճառներ կան.

ա.) Կեդրոնական Վարչութիւնը մեքենական կերպով տւած քոթաները, առանց նկատի ունենալու մասնաճիւղերու հնարաւորութիւնները: Մամուլը չ'օգտադորձեցաւ այդ նպատակներուն համար եւ քէմփէյնը մնաց ՀՕԿ-ի ներքին շրջաբերականներուն մէջ միայն:

բ.) Քէմբէջնը չի նախապատրաստեցաւ, այսինքն համապատասխան մարմիններ չ'ստեղծեցան, թէ Կեղ. Վարչութեան եւ թէ մասնաճիւղերուն մօտ : Այդ մենք ըրած էինք Թրաքթորի Հանդանակութեան ատեն, որու հետեւանքով այդ հանդանակութիւնը խոշոր յաջողութիւն գտաւ :

գ.) Մեր մասնաճիւղերու վարչութիւնները պէտք եղած ուշադրութիւնը չի տւին հարցին եւ իրենց զըրկը ւած հրահանգները, թելադրութիւններն ու միջոցները անտես առին : ՀօԿ-ի զանգաւածայնացման հարցը մասնաճիւղի մէջ մի անդամի աշխատանքի մէկ կարեւոր մասը չի կազմեց :

Այս թերութիւններու վերացումով անպայման մեզ կը յաջողէի ՀօԿ-ի մէջ ներդրաւել աւելի խոշոր զանգըւածներ յառաջիկա տարւան ընթացքին :

## 2.- Նոր Մասնաճիւղեր

Հինգերորդ Համագումարի կողմէ մեր վրա դրած պարտականութիւնը լիովին կատարած ենք : Համագումարը մեր վրա պարտք դրած էր մեր մասնաճիւղերու թիւը 50-ի բարձրացնելու, եւ արդէն մենք ունինք 55 մասնաճիւղեր եւ երկու ձիւնիքը Լիկեր : Այս գեկոյցին մէջ ամփոփեւած է Ընկ. Խ. Քէօսէեանի ղեկոյցը : Ընկերը 9 ամիս մնաց Միջին Արեւմուտքի եւ Քալիֆորնիո շրջանի մասնաճիւղերուն մօտ, ուր իր ջանքերով կազմեցան հետեւեալ մասնաճիւղերը. — Էյբըըն, Քնոչա, Կրանիթ Սիթի, Ուէսթ Լոս Անձելըս, Փասատէնա, Բիտլի եւ Ֆրեզնոյի ու Լոս Անձելըսի ձիւնիքը Լիկերը : Վերակազմեցան Թրոյի եւ Միրաքիւզի մասնաճիւղերը :

Ընկերոջ Քալիֆորնիա եղած ատեն ունեցանք Երջանային Խորհրդակցական Ժողով, ուր ընտրեցաւ Երջանային Մարմին մը, որ կը հսկէ մասնաճիւ-

ղերու գործերուն եւ կապ կը պահէ Կեղ. Վարչութեան հետ : Կազմեցաւ նաեւ Լոս Անձելըսի Քաղվարչը :

Անտարակոյս ընկ. Քէօսէեան ունեցաւ յաջող գործունէութիւն մը իր այցելած մասնաճիւղերուն մօտ եւ մեծ օգտակարութիւն անոնց կազմակերպական մեքենան զօրացնելու տեսակէտէ :

Փորձիչները մեր կազմակերպական կեանքի մէջ անհրաժեշտութիւն են : Անոնք կ'ստեղծեն ոչ միայն գործելու եղանակ եւ տրամադրութիւն մասնաճիւղերուն մօտ, այլ նաեւ զանգաւածային լաւ տրամագրութիւն դէպի ՀօԿ-ը : Այդ պատճառով ալ յաջորդ Կեղրոնական Վարչութիւնը հնարաւորութիւն պէտք է ստեղծէ հեռաւոր մասնաճիւղերուն գործիչները ղրկելու : Այս անհրաժեշտութիւնը կը շեշտւի այն իրողութեամբ, որ ՀօԿ-ի վայելած համակրանքը Ամերիկահայ դաղութիւն մէջ շատ աւելի մեծ հնարաւորութիւններ ունէր քան որ մենք կարողացանք օգտագործել :

Մեր նորակազմ մասնաճիւղերու մէկ մասը իրենց կազմով շատ տկար են եւ անհրաժեշտ է անոնց տալ մասնաւոր ուշադրութիւն եւ առաջնորդութիւն :

Խ. Հայաստանի մէջ կատարող շինարարութիւնը եւ հազարաւորներու ներգաղթը դէպի Հայաստան պատճառ դարձած են, որ ստեղծւի համակրական միջոցը մը բոլոր այն տեղերուն մէջ, ուր հաւաքական դաղութ մը կա : Այս համակրական վերաբերումը պէտք է գործնականացնենք կազմելով ՀօԿ-ի նոր մասնաճիւղեր : Մեր անմիջական նպատակաւէտը ըլլալու է 65 մասնաճիւղեր ունենալ մինչեւ յաջորդ Համագումար : Այս հնարաւորութիւնը կա եւ մեզ կը մնա օգտագործել դայն : Այսպիսի տեղերու մօտը գտնուող ՀօԿ-ի մասնաճիւղերը մեծ դեր կը նան

կատարել, իրենք ձեռնարկելով կազմակերպական աշխատանքի կամ դործակցելով Կեդ. Վարչութեան:

3.- Կրտսերաց Լիկաներ (ձիւնիքը Լիկեր)

Աշխատանքի այս դաշտին մէջ մեր դործունէութիւնը դեռ նոր կ'սկսի: Հակառակ Գլխաւոր Վարչութեան թելադրանքներուն եւ Հինգերորդ Համագումարի որոշումներուն, տակաւին այս աշխատանքին համար որոշ ծրագիր մը չ'ունինք եւ եթէ անցեալ շրջանին երկու Լիկեր կազմած են, այդ եղած է Ընկ. Քէօսէեանի ջանքերով: Այս համագումարը պէտք է մանրամասն կերպով քննէ այս հարցը եւ տա համապատասխան որոշումներ: Յաջորդ Կեդրոնական Վարչութիւնը պէտք է Եր Երիտասարդաց Բաժանմունքը ունենա, որ մասնաւորապէս այս հարցով զբաղւի, եւ եթէ հնարաւոր է, մասնաւոր դործիչ մը նշանակել, որ իր ժամանակը տրամադրէ երիտասարդներու կազմակերպման դործին:

Ս. Հայաստանի եւ Ս. Միութեան մէջ կատարող սոցիալիստական շինարարութիւնը եւ անոր որպէս արդիւնք հոն մեծցող նոր սերունդի աշխատանքները պէտք է Ամերիկահայ գաղութի նոր սերունդին ծանօթացնել: Այս ընելու համար անհրաժեշտ է անդլերէն լեզուով գրականութիւն: Այս գրականութիւնը պէտք է ըլլա առայժմ երկու տեսակ, առաջինը՝ ՀՕԿ-ի դերը բացատրող, իսկ երկրորդը՝ Ս. Հայաստանի նոր սերունդի կատարած յառաջդիմութիւնները պատկերացնող:

Սփորթը Ս. Հայաստանի երիտասարդութեան համար ամենաանհրաժեշտ մարզանքներէն մին նկատուած է: Այս երկրին մէջ մեր երիտասարդութիւնը տարած է բուրժուական արեւստ դարձած սփորթով: Պէտք է միջոցներ ստեղծենք Փուլթ Պօլի, Պէսքէթ

Պօլի, Պէյս Պօլի, Լողալու եւ առհասարակ ամէն տեսակ սփորթի վերաբերեալ խմբեր կազմակերպելու, որոնց մէջ հայ երիտասարդը ոչ թէ միայն մարզանք ընէ, այլ տեղեկանա նաեւ Ս. Հայաստանի մէջ կատարող յառաջդիմութիւններուն: Հայ երիտասարդութիւնը պէտք է կազմակերպւի, որպէսզի ան՝ փոխանակ Սորհրդային Հայրենիքի թշնամի բանակներուն մէջ թնդանօթի պատրաստակամ մ'ըս դառնալու, պաշտպանէ իր Սորհրդային Հայրենիքը:

Անտարակոյս կան շատ մը դժուարութիւններ, որոնց պէտք է յաղթահարենք: Բարեգործականի ճիւղիւրը լիկերը, Հայ Մարմնամարզական Ընդ. Միութիւնը, Հայ Ուս. Միութիւնը, Հայորդիք եւ Որդիք Հայաստանեացը, Գոլոնի Բլըպը իրենց ազդեցութեան ենթարկած են որոշ թւով հայ երիտասարդներ: Աշխատելով ստեղծել մեր ուրոյն Կըրտսերաց Լիկաները, ոչ մէկ ըսպէ պէտք է դադրինք զբաղւելէ այս կազմակերպութիւններու մէջ համախմբած կամ անոնց ազդեցութեան ենթակա երիտասարդութիւնով: Մեր, պարտականութիւնն է զանոնք ազատազրել իրենց յետադիմական ղեկավարներու հակախորհրդային սղղեցութեանէն եւ դարձնել զանոնք Սորհրդային Հայրենիքի հօգո ազդակներ:

Այդ ընելու համայն, ոչ միայն անհրաժեշտ է մեր տանելիք զիրոփականտան դուրսէն, այլ վերին աստիճանի կարեւոր է մեր ուժերու դործունէութիւնը: ուժեղացնել այդ կազմակերպութիւններու շարքերուն մէջ: Յաջորդ շրջանի ընթացքին առնազն 10 հատ նոր ձիւնիքը Լիկեր ունենալու ենք հետեւեալ քաղաքներուն մէջ. — Տիթրոյթ, Շիքակո, Նիւ Եորք, Փիլատելֆիա, Փրավիտենս, Ուստը, Լորէնս եւ Վոթթըթաուն:

#### 4. Դպրոցներ Մանուկներու Համար

Վերջին տարւան ընթացքին մանուկներու համար ՀՕԿ-ի դպրոցներ բացւեցան Տիթրոյթի եւ Լինի մէջ, իսկ Շիքակոյի մէջ բացւած է Պետ. Կար. Սաչի հետ խառն վարչութեամբ դպրոց մը: Սակայն դասագրքերու պակասը անկարելի կը դարձնէ աւելի խոշոր աշխատանք կատարել ներկայիս: Խ. Հայաստանէն ստացւած գրքերը անդործածելի են իրենց ուղղադրութեամբ եւ պարունակած նիւթերու պատճառով: Անհրաժեշտ էր նորերը պատրաստել: Առաջին դասարանի համար դասագիրք ունենալու համար պէտք է անմիջապէս գործի ձեռնարկել, որպէսզի մինչեւ աշուն պատրաստ ըլլա:

Հնարաւորութիւն կա բոլոր հայաշատ քաղաքներու մէջ ունենալ դպրոցներ: Այս դպրոցներուն համար կարող ուսուցիչներ գտնելու հարցը պէտք է քննութեան առնել եւ թոյլ չտալ, որ մեր դպրոցները ազգայնական թոյն ներարկող հաստատութիւններ ըլլան: Մեր դպրոցները կարող են եւ պէտք է ըլլան Կրտսերաց Լիկաներու թեկնածուներ պատրաստող մարմիններ: Մեր դպրոցները պէտք է զարգանան, որպէս ուրոյն կազմակերպութիւններ, որոնց մէջ պէտք է ներգրաւել մասնաւորապէս դպրոց յաճախող մանուկներու մայրերը եւ այն բոլոր տարրերը, որոնք կը հետաքրքրւին նոր սերունդի հայերէն սորվելու գործով, եւ կը փափաքին, որ նոր սերունդը կապւած ըլլա Խ. Հայաստանի: Անոնք պէտք է բաժին առնեն դպրոցներու զարգացման եւ Ֆինանսաւորման աշխատանքներուն մէջ, որպէսզի տարեկան պիւտճէն բեռ չըլլա ՀԹԿ-ի տեղական մասնաձիւղին վրա: ՀՕԿ-ի մասնաձիւղերը պէտք է հրակեն այս դպրոցներու գործունէութեան վրա եւ այդ նկատեն իրենց կարեւոր գործերէն մէկը:

#### 5. Կիները ՀՕԿ-ի Շարքերուն Մէջ Ներգրաւելու Գործը

Կիները մեր կազմակերպութեան մէջ տակաւին գործօն դեր չեն կատարեր: Իրապէս, ՀՕԿ-ը տակաւին Հայ ընտանիքէն ներս չէ թափանցեր: Լենինի այն խօսքը, թէ «Ամէն մէկ խոհարար կին պէտք է երկիր մը կառավարել սորվի», Խ. Հայաստանի մէջ իրականութիւն է դարձած: Հոն կինը հաւասար չափով բաժին կ'առնէ շինարարական աշխատանքներու, ինչպէս նաեւ գործերու ղեկավարման մէջ: Չենք կարող կնոջ հաւասարութեան մասին խօսիլ եւ թոյլ չտալ, որ կինը հաւասար պատասխանատուութիւն ըստանձնէ մեր կազմակերպութեան մէջ: Պէտք է փոխենք մեր գործելու եղանակները, եւ ոչ միայն կին անդամներ բերենք մեր կազմակերպութեան մէջ, այլ դարձնենք զանոնք յանձնարարներու եւ վարչութեանց անդամներ:

ՀՕԿ-ի Կրտսերաց Լիկաներու եւ Դպրոցներու հարցը սերտ կերպով կապւած է ՀՕԿ-ը երկսեռ կազմակերպութիւն մը դարձնելու հարցին հետ, որովհետեւ աշխատանքի այդ մարդին մէջ առանձնապէս կարեւոր է կանանց օժանդակութիւնը:

Մեր կին անդամներու թիւը հազիւ 216-ի կը հասնի ՀՕԿ-ի բոլոր մասնաձիւղերուն մէջ: Այս շատ անբաղձալի դրութիւն է: Անհրաժեշտ է մասնաւոր քննարկել այն առաջ տանիլ, յանձնարարներ կազմել եւ տունէ տուն այցելել կին անդամներ արձանագրելու համար: ՀՕԿ-ի անդամները նախ պէտք է սկսին իրենց տունէն, անդամագրելով իրենց կիները եւ քոյրերը ՀՕԿ-ին: ՀՕԿ-ի յաջորդ Կեդ. Վարչութիւնը այս ուղղութեամբ գործունէութեան աւելի խնամւած ծրագիր մը պէտք է մշակէ:

6.- Հայրենակցական Միութիւնները եւ ՀՕԿ-ը

Վերջին տարւան ընթացքին ՀՕԿ-ը Բարեգործականի, Թոմարղացիներու, Սերաստիացիներու, Մալաթիացիներու եւ այլ կազմակերպութիւններու համար 32,000 տոլարի արժողութեամբ գնումներ կատարեց եւ զանոնք Խ. Հայաստան փոխադրեց Ամթորկի միջոցաւ: Բացի այդ, նոյն կազմակերպութիւններու պատկանող 26,000 տոլար գումար մը փոխադրւած է Խ. Հայաստան ՀՕԿ-ի միջոցաւ: Միւս կողմէ աշխատանք կատարեց, որ նորանոր վերաշինական կազմակերպութիւններ շինարարական աշխատանք սկսին Խ. Հայաստանի մէջ: Այս աշխատանքներու որպէս արդիւնք եւ Խ. Հայաստանի բարեկամներու աջակցութեամբ, ուրախ ենք յայտնելու, որ Տիգրանակերտի Վերաշինաց - Հայրենակցական Միութիւնը իր Համագումարով որոշած է Խ. Հայաստանի մէջ «Նոր Տիգրանակերտ» շինել: Այս կազմակերպութեան Կեդրոնական Վարչութիւնը արդէն յարաբերութեան մէջ մտած է ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութեան հետ այս աշխատանքի սկսման համար: Կ'սպասենք նաեւ, որ Կեսարիո Վերաշինաց Միութիւնը շուտով սկսի գործի:

Այսու հանդերձ, մեր կապը թոյլ եղած է Հայրենակցական Միութիւններու մէջ կազմակերպւած զանգւածներու հետ: Պատճառը այն է, որ շատ մը Հայրենակցականներու մասնաճիւղեր անդամական ժողովներ չեն ունենար, եւ շատ անգամ, անոնք դեկավարութիւնը հակախորհրդային տարրերու ձեռքն է, որոնք այդ կազմակերպութիւններու անւանական գոյութիւնը կը գործածեն հարւածելու համար Խ. Հայաստանի վերելքը: ՀՕԿ-ի անդամները առանձնապէս պէտք է ուշադրութիւն դարձնեն իրենց ծննդավայրի Հայրենակցական Միութիւնները դուրս

քերելու այդ վիճակէն եւ զանոնք վերածելու իսկական զանգւածային գործօն կազմակերպութիւններու, կանգնած Խ. Հայաստանի նւաճումները պաշտպանելու գծին վրա:

7.- ՀՕԿ-ը եւ Ներգաղթը

Ներգաղթը ՀՕԿ-ի յատուկ գործերէն մէկն է: ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութեան Նախագահը անդամ է Խ. Հայաստանի Ներգաղթի Արտակարգ Յանձնաժողովին, որ բաղկացած է ժողովրդական Կոմիտարներէ եւ Քաղաքային Վարչութեան Նախագահէն:

ՀՕԿ-ի նախաձեռնութեամբ կազմակերպւած Ներգաղթի Ամերիկայի Յանձնախումբը ամէն հնարաւորութիւն ունի, Փինանսապէս եւ կազմակերպականօրէն, լաւ արդիւնքներ ձեռք բերելու: Սակայն անոր մինչեւ այժմ ցոյց տւած գործունէութիւնը եղած է ակնկալւածէն շատ պակաս, եւ եթէ անմիջական քայլեր չ'առնուին այս գործին մղում տալու, ամբողջ շարժումը կարող է մեռնիլ: ՀՕԿ-ի մասնաճիւղերը շատ թոյլ շարժեցան տեղական Յանձնախմբերու կազմակերպման գործին մէջ: Մեր մասնաճիւղերը պէտք է ամէն օժանդակութիւն տան այս ձեռնարկին: Ներգաղթի Ամերիկայի Յանձնախումբին մասնակցող կազմակերպութիւնները պէտք է աւելի լայն շափերով մասնակից դարձնենք այս աշխատանքներուն եւ առհասարակ թափ տանք Ներգաղթի գործին:

Հաղարւորներու դէպի Խ. Հայաստան Ներգաղթը պատճառ դարձած է, որ նոյնիսկ դաշնակցական շարքայինները հետաքրքրւին Խ. Հայաստանով եւ նպաստաւոր կարծիքներ յայտնեն այդ մասին: Այսպիսի նպաստաւոր դրութիւն մը պէտք է օգտագործենք, նպաստելու համար Խ. Հայաստանի շինարարական աշխատանքին:



Մեր մասնաճիւղերը պէտք է ուշադրութիւն դարձնեն, որ Ներգաղթի Յանձնախմբին միացող այն վերաշինական կազմակերպութիւնները, որոնք տակաւին 10. Հայաստանի մէջ իրենց անուով աւաններ կառուցանելու չեն ձեռնարկած, անմիջապէս սկսին գործի: Այս ուղղութեամբ մեր ջանքերը պիտի արդիւնաւորին, երբ տեւալ Հայրենակցական Միութեան մը մասնաճիւղերը ճնշում բանեցնեն իրենց կեդրոնին վրա նոր աւանի մը շինութեան համար: ՀՕԿ-ի անդամները այդ աշխատանքն է, որ պէտք է կատարեն իրենց գործունէութեան շրջանակին մէջ ինկող Հայրենակցական Միութիւններու անդամներուն մէջ:

#### 8.- ՀՕԿ-ի Ձեռնարկները

Ձանգեզուրի վերաշինութեան ի նպաստ եղած հանգանակութիւնը տւաւ 3149 տողար 55 սէնթ, որը արդէն յատկացւած է իր նպատակին:

Ներգաղթի Ամերիկայի Յանձնախմբի ձեռնարկելիք հանգանակութիւնը եւ տիրող տնտեսական ծանր տազնապը պատճառ դարձան, որ կեդրոնական Վարչութիւնս 10. Հայաստանի վերաշինութեան ի նպաստ ուրիշ ձեռնարկ չ'սկսի: Յաջորդ շրջանի ընթացքին պէտք է նկատի ունենալ Գլխաւոր Վարչութեան կողմէ ՀՕԿ-ի նոր տուն մը շինելու ծրագիրը, որուն հիմերը արդէն գրեթէ սկսած են, եւ մեզի կը մնա որ նիւթապէս օժանդակենք այդ ծրագրի իրագործման:

Գլխաւոր Վարչութիւնը ճրագրած էր նաեւ որոշ թուով քէֆսիներ նւիրել Երեւան եւ Անիիական քաղաքներուն, անոնց փոխադրական հարցի լուծման օժանդակելու նպատակաւ: Այս երկուքն ալ կարելոր հարցեր են եւ վստահ ենք, որ Ամերիկահայ աշխատաւորութիւնը իր սրտին մօտիկ պիտի դանէ զա-

նոնք եւ ամէն կերպով պիտի աջակցի անոնց գերակատարման:

Հոս կուզենք յիշել նաեւ այն պարագան, որ ՀՕԿ-ի միջոցաւ 10. Հայաստան զրկւած են հետեւեալները.

2 սնտուկ բժշկական գրքեր եւ գործիքներ՝ Երեւանի Հիւանդանոցին, 4 սնտուկ դիտական գրքեր նըււրւած Երեւանի Համալսարանին՝ Քաղաքացիներ Ճ. Մ. Մարութեանի, Տօք. Եկեանի, Ե. Յ. Կոնոնեանի, Պարոնիկ Պարոնի եւ Փրօֆ. Յ. Մ. Տատուրեանի կողմէ, 2 խոշոր սնտուկ հին հազուատներ՝ նւիրւած հայ գերձակներու կողմէ:

#### 9.- Մեր Հրատարակութիւնները ու Փրօֆակստան

10. Հայաստանի 11-րդ տարեգարձի եւ ՀՕԿ-ի Տասնամեակի առթիւ կեզ. Վարչութիւնը հրատարակեց «Երևարար»-ի թիւ մը, որ իր ծաւալով եւ բովանդակութեամբ մեզի համար նկատելի նւաճում էր եւ իր տեսակին մէջ նոր գործ մը. սակայն, ունի աչքի զարտնուց թերութիւններ: Ամենէն տուաջ այդ հրատարակութիւնը պատերազմի վտանգը աչքաթող ըրաւ այնպիսի ժամանակ մը, երբ ճափոնական զօրաբանակները Մանչուրիո մէջէն դէպի Խորհրդային սահմանազուխը կը յառաջանային, եւ ձարոն սպիտակ բանակայինները կը զէնդարգրէր Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու մէջ: Հրատարակութեան մէջ անտես առնեցաւ նաեւ Ներգաղթը: Անհրաժեշտ էր թէ Ներգաղթին ի նպաստ ծաւալուն շարժում ստեղծել եւ թէ հակա-Ներգաղթ դաւադրութիւնները եւ տրամադրութիւնները ի դերեւ հանել: Կարելի է ըսել, որ «Երևարար»-ի մէջ թոյլ տրւած են նաեւ մէկ քանի սըխալներ, որոնք հիմնական սխալներ են եւ իրենց բընոյթով հակախորհրդային: Օրինակ՝ Փրօֆ. Յ.

Տատուրեանի «Ազգային Փոքրամասնութիւնները և Միութեան Մէջ» յօդուածը, որ ունէր շատ մը սխալներ, եւ որոնց կարգին, ունէր նաեւ խոշոր առաւելութիւններ: Փրօֆեսօրը խանդավառութեամբ կը խօսի Խ. Միութեան նւաճումներուն մասին, մասնաւորաբար Ազգային Փոքրամասնութիւններու հարցի լուծման վերաբերմամբ: Եթէ այս թերութիւնները Փրօֆեսօրին ուշադրութեան յանձնուած ըլլային եւ ինքը պատեհութիւն ունենար ծանօթանալու անհրաժեշտ գրականութեան, մենք աւելի քան վստահ ենք, որ ան անձամբ կը սրբադէր այդ սխալները: «Բանաւոր»-ի մէջ երեւցած քննադատութեան Փրօֆեսօրը մօտեցաւ որպէս ինքնաքննադատութիւն: Մենք անհրաժեշտ կը նկատենք անդրադառնալ յօդուածի սըխալ մտքերու շուրջ, կարենալ լուսաբանելու համար Խորհրդային իրականութեան հետ կապ ունեցող մի քանի հիմնական խնդիրներ:

Փրօֆ. Յ. Տատուրեան այն միտքը կը յայտնէ, որ ազգային կուլտուրայի դարգացումը կեդրոնախոյս ձգտումները կը զօրացնէ, բայց Խ. Միութեան տընտեսական կեդրոնաձիգ քաղաքականութիւնը կը չեզոքացնէ զայդ: Ըստ Փրօֆեսօրի, Խ. Հայաստան՝ նախքան խորհրդայնացումը, իր ապրուստի համար կիսանկախ երկիր է եղեր, իսկ այժմ ամբողջապէս կախած է Խ. Միութենէն իր հացին համար: Ամենէն առաջ պէտք է ըսել, որ Փրօֆեսօրը կ'անտեսէ դաստիարակութեան մէջ Լենինեան ազգային առողջ քաղաքականութիւնը, որ ձեւով ազգային եւ բովանդակութեամբ միջազգային է, որ ո՛չ միայն կեդրոնախոյս ձգտումներ չի զօրացներ, այլ ընդհակառակը օր ըստ օրէ կ'ամրապնդէ Խ. Միութեան բանւորութեան կապը: Յարական Ռուսաստանը, որ ճնշած ժողովուրդներու բանտն էր, չնորհիւ Լենինեան ազ-

գային քաղաքականութեան՝ արդէն իսկ վերածուած է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու հօրազօր եւ ամբողջ Միութեան:

Պէտք է կտրականապէս մերժել նաեւ այն միտքը, թէ Հայաստանը նախապէս կիսանկախ է եղեր իր ապրուստի տեսակէտէն: Ծանօթ իրողութիւն է, որ ցարերու օրով, Հայաստան եղած է Ռուսաստանի յետամնաց եւ թշուառ մէկ ծայրագաւառը, որ Խ. Միութեան եղբայրական ամենալայն օժանդակութիւնով ու Հայաստանի բանւորազինւորական զանգաձններու հարւածային աշխատանքով ու տոկոսն կամ քով վերածուած է արդիւնաբերական երկրի: Ելեկտրական վիթխարի կայանները եւ արդիւնաբերական տիտանները վկաներ են մեր հաւաստումին: Հոս կը փափաքինք նշել նաեւ այն պարագան, որ արդիւնաբերական իր վերելքին հետ զուգընթաց, Խ. Հայաստանը հսկայական նւաճումներ կատարած է գիւղատնտեսական մարդին մէջ: Այն փաստը, որ Խ. Հայաստանի գիւղատնտեսութիւնը արագ թափով կ'ենթարկուի մեքենայացման, ցցուն ապացոյց է անոր արտադրական կարողութեան բազմապատկումին: Հայաստանի մէջ բամբակամշակութեան եւ առհասարակ բարձր դասու բոյսերու մշակութեան փաստը Փրօֆեսօրը կը գործածէ որպէս ապացոյց՝ հաստատելու համար Խ. Հայաստանի առկա զբոսութիւնը՝ իր հացահատիկի պարենաւորման համար: Պէտք է նկատի ունենալ, սակայն, որ Խ. Հայաստանը այսօր աւելի ցորեն կ'արտադրէ, քան որ կ'արտադրէր ցարերու օրով: Մշակութային բոյսերու տրամադրւած տարածութիւններու փոխան, նորանոր հողամասեր կը տրամադրուին հացահատիկի մշակութեան համար, չնորհիւ ոռոգումներու ծաւալման:

Փրօֆեսօրը կը յայտնէ նաեւ այն միտքը, թէ հա-

աքաղական տնտեսութիւնները՝ լաւ պատրաստուած չէին Կեդրոնական Կառավարութեան կողմէ, եւ հետագային կատարուած սխալներու յանցանքը Կեդրոնական Կառավարութիւնը վերադրեց շարքայիններու քայրայեղ եռանդին: Ան կը յայտնէ նաեւ, թէ հաւաքական տնտեսութիւններու մէջ մտնող զիւղացիներու վիճակը ալ աւելի ծանրացած է բաղդատմամբ այն վիճակին, որ անոնք ունեցած են Հաւաքականներու մէջ մտնելէ առաջ: Թէ Կառավարութիւնը սխալ մը գործած է ջուլաքուլիւնը՝ որպէս դասակարգ՝ վերացնելու աշխատելով եւ անոնց բաւարար հատուցում չընելով:

Այս տեսակ տեսութիւններու հիւրընկալումը՝ մեր հրատարակութիւններուն մէջ՝ բացարձակապէս վրնասակար է, որովհետեւ անոնք իրականութեան չեն համապատասխաներ: Խ. Միութիւնը մեծ խնամքով հաշի առաւ հաւաքականացման կարելիութիւնները եւ ուժերու փոխյարաբերութիւնը, ու՛րստ այնմ որոշեց ամէն մէկ շրջանի հաւաքականացման թափը: Բոլոր անոնք, որոնք Համամիութենական Խորհուրդներու Համագումարի արձանագրութեան եւ Լենինեան հաւաքականացման քաղաքականութեան ծանօթ են, շատ լաւ գիտեն, որ բռնի հաւաքականացումը տաք գլուխներու եւ «ձախ» պատեհապաշտներու գործն էր, որոնք ոչէմ վճռական պայքար մղեց Խորհրդային Իշխանութիւնը, ապահովեց այսօրւան խոշոր յաջողութիւնները՝ հաւաքականացման ասպարէզին մէջ, հնարաւոր դարձնելով ջուլաքութեան՝ որպէս դասակարգ՝ վերացումը հացահատիկի եւ բամպակի հիմնական շրջաններուն մէջ: Եթէ զիւղացիութեան վիճակը աւելի ծանրացած լինէր հաւաքական տնտեսութիւններու մէջ, Խորհրդային Իշխանութեան համար հնարաւոր չպիտի ըլլար

այսօրւա նաճումները ձեռք բերել: Հաւաքականացումն է, որ հնարաւոր կը դարձնէ գիւղատնտեսութեան մեքենականացումը, բերքի աճումը եւ հետեւաբար զիւղացիի փեանքի պայմաններու բարելաւումը: Մենք մեզի երբէք չենք թոյլատրեր պաշտպանել ջուլաքներու շահը, այդ դաշնակիներու եւ առհասարակ բուրժուայամիտներու գործն է, որոնք արցունք կը թափեն՝ որպէս դասակարգ՝ անհետացող ջուլաքի համար: Գուլաքներու անաւունները եւ գործիքները չեն բռնադրուած, այլ համատարած հաւաքականացման պայմաններու տակ, զրկած չահագործումի բոլոր կարելիութիւններէն, ջուլաքները կ'անհետանան, որպէս դասակարգ: Այս ջուլաքներն էին, որ ենթարկեցան Խումանական դաղտնի ոստիկաններու խրատներուն եւ սարքեցին Տնիէթէրի խայտառակութիւնը, փախուստի դիմելով դէպի Խումանիա, ուր իրենց կը խոստացէր շահագործման փայլուն կարելիութիւններ, մինչ ան՝ գիւղատնտեսութեան տեսակէտէն կատարեալ քայքայման եզրին է հասած:

Պէտք է շեշտել նաեւ, որ Տր. Թաշճեանի յօդածին վերջաւորութիւնը՝ Քալիֆուրնիո Հայ երկրագործներու մասին, չէր համապատասխաներ իրականութեան: Ան այնպէս ցոյց կուտար, թէ տոկոսն ու յամառ աշխատանքը կրնա հողագործին ապրուստ մը ապահովել, բայց նոր սերունդը՝ տարւած քաղցինի մտայնութիւնով՝ քաղաք կը խուժէ, հեշտ կեանք մը ապրելու համար: Այն պահուն, երբ աշխատաւորութեան թշնամիները կը փորձեն այդ միեւնոյն մտայնութիւնը ժողովրդականացնել բանւորներու ուշադրութիւնը անգործութեան դէմ մղած պայքարէն ուրիշ կողմ շեղեցնելու համար, ՀՊԿ-ը պէտք չէր իր հրատարակութեան մէջ թոյլ տար այդպիսի

մտայնութեան մը արտայայտութիւնը: Ընդհակառակն՝ իր անդամներուն իսկ շահով տարւած՝ զայն մերկացնելու էր խմբագրական դիտողութիւններով: Գրքի բովանդակութեան ընդհանուր տիրող շունչը ազատական է, որ «Շինարար»ի խոշոր թերութիւնն է: Այդ սխալներուն համար պատասխանատու է ՀՕԿ-ի Կեդրոնական Վարչութեան քարտուղարը եւ Խմբագրական մարմինը:

«Իսկուտ»ը այս թերութիւնները նկատեց եւ երկար ու հանգամանօրէն անդրադարձաւ անոնց շուրջ, անհրաժեշտ նիւթ հայթայթելով մեր մասնաճիւղերուն, «Շինարար»ի բովանդակութիւնը քննութեան ենթարկելու եւ կարծիքներու փոխանակութիւն կազմակերպելու:

ՀՕԿ-ը հրատարակեց նաեւ երկու գրքոյկներ «Իմ փերիալիզմի Ազեմտ Դաշնակցութիւն»ը եւ «Լիթվի-նօֆի ֆաւր»՝ խօսւած ժրնելի Զինաթափութեան Համաժողովին: Հակառակ այն իրողութեան, որ չափազանց չնչին դին նշանակւած էին այս գրքոյկներուն համար, կարելի չեղաւ զանոնք հասցնել լայն զանգւածներուն: Շատ քիչ թւով գրքոյկներ ծախւած են մեր անմիջական շրջանակէն դուրս: Ամենէն առաջ պատճառը պէտք է փնտռել այն բանին մէջ, որ մեր անդամներուն մեծամասնութիւնը չի հետաքրքրւիր մեր հրատարակած գրականութիւնով:

Ինչպէս յայտնի է, մենք չենք կարողացած հանգամանօրէն ծանօթացնել Խ. Հայաստանի նւաճումները մեր հրատարակութիւններու միջոցով: Յաջորդ շրջանին անհրաժեշտ է ունենալ աժան եւ դիւրամատչելի գներով, պատկերազարդ գրքոյկներ Խ. Հայաստանի շինարարութեան եւ պաշտպանութեան հարցին շուրջ:

Աւելորդ չըլլար նաեւ մէկ քանի խօսք ըսել գրա-

կանութեան տարածման մասին: Մեր կազմակերպութեան մէջ մասը այս տարւած ընթացքին կարողացաւ զնահատելի աշխատանք կատարել գրականութիւն սպառելու գործին մէջ, մասնաւորապէս Յիւլատելֆիո մասնաճիւղը՝ ընկ. Հայկ Յովսէփեանի առաջնորդութեամբ:

Անհրաժեշտ է նոր մեթոտներ ձեռք առնել մեր գրականութիւնը տարածելու համար, որոնցմէ մէկ քանինքը հետեւեալներն են.

Ա. — Տունէ տուն շրջիլ որոշած օրերու եւ շրջաններու մէջ:

Բ. — Թէ մեր եւ թէ ուրիշ կազմակերպութիւններու ձեռնարկներուն առթիւ գրականութիւն ծախել:

Գ. — Զանազան ընտանեկան այցելութիւնները օգտադործել:

Դ. — Շրջաբերութեան դնել սպառելի գրքերու արժէքին համապատասխան գումարով՝ 5 կամ 10 սէնթնոց վիճակահանութեան տոմսեր, զորս դիւրութեամբ կարելի է վաճառել հայ աշխատաւորական զանգւածներուն:

Ե. — Մասնաւոր խմբերով այցելել այն գաղութները, ուր ՀՕԿ-ը մասնաճիւղ չ'ունի:

Զ. — Մասնաւոր գրքերու մասին վիճարանութիւն եւ մամուլի մէջ տեսութիւններ ընել:

Ը. Հայաստանի 11-ամեակի առթիւ, Կեդ. Վարչութիւնը պատրաստեց ուրւագիծ մը մեր ատենախօսներուն համար, որ մեծ օգտակարութիւն ունեցաւ եւ զնահատելի մասնաճիւղերու կողմէ: Յաջորդաբար ուրւագծեր ղրկուեցան Խ. Հայաստանի գիւղատնտեսութեան եւ ՀՕԿ-ի Համագումարի մասին. մեր մասնաճիւղերը վարժ չըլլալով այսպիսի գործունէութեան, անկարող եղան լաւագոյնս օգտադործել ղրկւած ուրւագծերը: Իսկ Կեդ. Վար-

չութիւնը թոյլ վարեցաւ եւ պէտք եղած առաջնորդութիւնը չի տաւ մեր մասնաճիւղերուն՝ մանրամասն կերպով բացատրելով ուրագծերը գործածելու կերպերը: Ամէն մէկ մասնաճիւղ պէտք է ըստեղծեր իր փրոփականտի յանձնախումբը, որ հաւաքաբար տանէր աշխատանք, բայց դժբախտաբար այս չ'իրականացաւ:

Այս տարի մեր տօնակատարութեան 30 ժողովներուն ներկա եղան մօտաւորապէս 7-8000 հոգի: Իսկ մեր մասնաճիւղերու սարքած յաղմաթիւ ձեռնարկներուն ներկա եղան ուրիշ հաղարներ: Սակայն, թէ՛ տօնակատարութեան եւ թէ՛ միւս ձեռնարկներուն եկողներու թիւը անհամապատասխան է Ու. Հայաստանի Ամերիկահայ բարեկամներու թւին:

Ու. Հայաստանի մէջ կատարուող շինարարութիւնը դադութաճայ աշխատաւորութեան ծանօթացնելու գործը, որ ՀՕԿ-ի հիմնական նպատակներէն մին է, կը կարծօտի մասնաւոր ուշադրութեան: Վերեւ ներկայացած թիւերը ապացոյց են, որ 150,000ի մօտ աշխատաւորութիւն ունեցող դադութի մը հազիւ մէկ քսաներորդին կարողացած ենք հասնիլ մեր բեմով, իսկ մեր գրականութիւնով՝ աւելի՛ քիչ:

#### 10. — Մեր Պիւտճէի Իրութիւնը

ՀՕԿ-ի գոյութենէն ի վեր առաջին անգամն ըլլալով ստեղծեցինք պիւտճէի դրութիւնը: Տարիներուն թափաքին շարունակ բաց ունեցած ենք մեր տարեջրջանի վերջաւորութեան, որովհետեւ ջանք ըրած չենք մեր գործելու եղանակը փոխելու: Այս տարի, պիւտճէի դրութեան հաստատումով, հնարաւոր պիտի ըլլաւ մեզ համար, յաջորդ տարեջրջանին ո՛չ միայն նոր պարտք չ'ունենալ, այլ ներկա եւ նախորդ շրջաններու պարտքերուն մէկը մասն աւելճարել:

Որպէսզի այս աշխատանքը քիչ մը աւելի դիւրանա, կ'առաջարկենք, որ ՀՕԿ-ի պաշտօնեաներու շաբաթավճարը իջեցւի 30 տոլարի, ծախսի ուրիշ գումարներէն ըլլան համապատասխան կրճատումներ, ու մասնաճիւղերու վրա դրած գոթաները ճշդին մեր տարեկան նախահաշիւին համաձայն:

#### 11. — Խ. Հայաստանի Պաշտպանութեան Նշանաբանը Վերածելիք Գործի

Մեր փրոփականտի գործին հետ անմիջականօրէն կապուած խնդիրներէն մին ալ Ու. Հայաստանի պաշտպանութեան աշխատանքն է: Երբ նկատի կ'առնենք մեր կատարած աշխատանքները այս ուղղութեամբ, կուզանք այն եզրակացութեան, թէ տակաւին շատ հեռու ենք մեր նպատակակէտէն:

Մեր մասնաճիւղերու մէկ մասին համար այս հարցը նոյնիսկ որպէս նշանաբան գոյութիւն չունի: Անոնք նոյնիսկ չեն դիտեր, թէ այս նշանաբանը իրենցմէ ինչ կը պահանջէ: Այս կէտին մէջ պնդասխանատուութիւնը հիմնովին կը ծանրանա կեդրոնակ. վարչութեան վրա, որ մեր կազմակերպութեան անդամներուն շատ քիչ բացատրութիւններ տուած է այս հարցին շուրջ:

Այլեւս ոեւէ տարակոյս չէ կարող ըլլալ, թէ Ու. Միութեան թշնամի նւաճողական պետութիւնները իրենց երկիրներու մէջ տիրող անգործութեան տաղնապէն միակ ելքը կը նկատեն հակա-Սորհրդային պատերազմը: Ճախոնական բանակները արդէն ինքնակաշիւն սահմանին շատ մօտ են եւ նորանոր բանակներ կը կեդրոնացւին Մանչուսթրի մէջ: Այսպիսի պայմաններու տակ հակախորհրդային պատերազմը անմիջական եւ անխուսափելի կը դառնա: Միւս կողմէ, նորանոր փոխառութիւններ կը կնքուին

Ֆրանսայի եւ Նորհրդային սահմաններու վրա գտնուող շիրքը դրամատիրական երկիրներու միջեւ, որ պէտքի աւելի արագ թափով յառաջանան պատերազմի պատրաստութիւնները:

Ս. Միութեան դէմ սկսելիք ունէ պատերազմէ անմասն չէ կարող մնալ Ս. Հայաստանը, որ անոր բաղկացուցիչ միւսերէնէն մէկն է: Պատերազմի պարագային, Ս. Հայաստանի մէջ կատարուող սոցիալիստական շինարարութիւնը անխուսափելիօրէն դադար պիտի առնէ եւ հազարաւորներ զէնք պիտի առնեն պաշտպանելու աշխատաւորութեան սոցիալիստական հայրենիքը:

Այս խնդիրներու բացատրութեան առթիւ, ՀՕԿ-ի թիւ 12 շրջաբերականը անհրաժեշտ բացատրութիւնները տւած չէր, որմէ այն տպաւորութիւնը ստացան մեր մասնաճիւղերէն ոմանք, թէ ՀՕԿ-ը պիտի միանա տեղական կազմակերպութիւններու:

Թիւ 12 շրջաբերականով տրւած հրահանգները չեն ենթադրեր, որ ՀՕԿ-ը միանա Ֆրէնտոյ Այլ Սովիէթ Յունիւն կազմակերպութեան, այլ կ'առաջադրէր մասնակցիլ անոր կողմէ Ս. Միութեան պաշտպանութեան հարցին շուրջ հրաւիրւած խորհրդակցական ժողովներուն եւ գործադրել այդ ժողովներէն բըզխող որոշումները: ՀՕԿ-ը ուրոյն կազմակերպութիւն է եւ չի միանար ունէ տեղական կազմակերպութեան, կը գործակցի միայն Ս. Միութեան պաշտպանութեան եւ շինարարութեան հարցերուն շուրջ հրաւիրւած ժողովներուն եւ անոնցմէ բխող որոշումները կը ջանա իր սահմաններուն մէջ գործադրել:

Միւս կողմէ ՀՕԿ-ը պէտք է անխնայօրէն մերկացնէ ազգայնական կուսակցութիւնները եւ անոնց հակա-ներգաղթ գործունէութիւնը, որով անոնք կը ձգտին հայ գաղթականութիւնը տեղաւորել Սուրիո՞

մէջ: Այն քաղաքներուն մէջ, ուր ՀՕԿ-ի բարեկամներ կան, պէտք է մերկացնեն Բարեգործականի հակա-ներգաղթ դիրքը եւ զգուշացնեն հայ աշխատաւորութիւնը, որ Ներգաղթի ի նպաստ անոր ըրած ձեռնարկները չի քաջալերէ: Անհրաժեշտ է մասնաւոր հրատարակային ժողովներ ունենալ, ուր այս հարցի մասին տրւին բացատրութիւններ, ջանալով բոլոր Ս. Հայաստանի բարեկամ հասարակական կազմակերպութիւնները մասնակից դարձնել այս ժողովներուն: Այս ուղղութեամբ յաջորդ Կեդ. Վարչութիւնը պէտք է աւելի լայն բացատրութիւններ տա մեր մասնաճիւղերուն:

## 12.- Թեքուքիւններ

Մեր կազմակերպութեան մէջ տակաւին չենք կարողացած հաստատել կարգապահութիւն: Այս պատճառով, յաճախ կ'ունենանք թերութիւններ, որոնք կը վնասեն մեր գործին: Պէտք է նկատի ունենալ, որ մէն մի ընկեր մեր կազմակերպութեան սիւներէն մէկն է, եւ երբ մէկը կամ միւսը կը թերանա իր գործին մէջ, այդ կազմակերպական շէնքը անհրաժեշտ տոկունութիւնը չ'ունենար եւ անկարող կըլլա դիմադրաւել իր թշնամիներուն:

Այս տեսակէտէն քննադատելի է Կեդ. Վարչութեան քարտուղարի անհոգութիւնը, որով Նիւ Եորքի մօտ գտնուող մասնաճիւղերուն անհրաժեշտ ուշադրութիւն չէ դարձուցած, որուն որպէս հետեւանք, այդ մասնաճիւղերուն մէկ մասը թոյլ մնացած է եւ իրենց գործունէութիւնը բոլորովին անգոհացուցիչ եղած է:

## 13.- Ֆիլմեր

Այս տարի բաւական զժւարութիւն ունեցանք նո-

բանոր Ֆիլմեր ձեռք բերելու, որովհետեւ պահանջը  
լաճ գիները մեր կարողութենէն վեր էին, սակայն  
յոյսով ենք, թէ մինչեւ Յուլիսի վերջերը կարելի  
կըլլա այս հարցը կարգադրել:

Ֆիլմերու ցուցադրութեան հարցին վրա պէտք է  
նայիլ միայն շահու տեսակէտէ, այլ նկատի ունենա-  
լու ենք, որ անոնք մեր փրօփակմանտի լաւագոյն մի-  
ջոցներէն մէկն են: Այդ պատճառով ալ որքա՛ն  
չատ մարդ ունենանք մեր ձեռնարկներուն, այնքա՛ն  
չատ մարդոց հասած կըլլանք մեր այս ձեւի փրօ-  
փականտով:

#### 14. — Վերջաբան

Ընկերներ, մէկ կողմէ դրամատիրական երկիրնե-  
րու մէջ տիրող անտեսական տագնապը եւ միլիոննե-  
րու անգործութիւնը եւ թշուառութիւնը, միւս կողմէ  
Խորհրդային երկիրներու մէջ արագ թափով առաջ  
տարւող սոցիալիստական շինարարութեան շնորհիւ  
անգործութեան վերացումը, եւ հազարաւորներու  
ներգաղթը դէպի Խ. Հայաստան, պատճառ դարձած  
են, որ դադուրեթաճայ աշխատաւորութիւնը իր յոյսը  
դնէ Խ. Հայաստանի վրա, անոք դոյութեան մէջ  
տեսնելով միակ ելքը իր այս անտանելի դրութենէն:  
Մեզի կը մնա լաւ կերպով գնահատել այս նպատա-  
ւոր պայմանները եւ կազմակէտրել հայ աշխատաւո-  
րութիւնը ՀՕԿ-ի շարքերուն մէջ:

Պէտք է անխնա կերպով ինքնաքննադատութեան  
ենթարկել մեր թերութիւնները եւ ջանադիր ըլլալ  
ուղղելու զանոնք:

Մեր բոլոր աշխատանքները նպատակ ունենալու  
են Ամերիկահայութեան մէջ ծառայութեան ողին  
մշակել յօգուտ Խորհրդային Հայրենիքին, եւ այս-

պէսով դրաւել դադուրեթաճայ աշխատաւորութիւնը  
ՀՕԿ-ի շարքերէն ներս:

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԿԵԳ. ՎԱՐՁՈՒԹԻՒՆ (Ծափաղջոյններ ներկաներէն)

Ստուգիչ Յանձնախումբի կողմէ Ընկ.: Աւետիս  
Խանձեան ղեկոյց, թէ ՀՕԿ-ի 56 մասնաճիւղերէն 26-  
ը իրենց ուրոյն պատգամաւորները, իսկ 17-ը իրենց  
ձայնը ղրկած են, 11 մասնաճիւղեր եւ 2 նորակազմ  
ձիւնիւրը կրկերը ոչ ձայն ղրկած էին եւ ոչ ալ պատ-  
գամաւոր: Վերոյիշեալ 43 մասնաճիւղերը կը  
մասնակցէին 60 պատգամաւորներով, որոնց ցանկը  
հետեւեալն է. —

Ասթորիա՝ Աշոտ Ղազարեան, Էյքըրն՝ Գ. Մար-  
տիրոսեան, Ինտիւն Օրչըրտ՝ Աբրահամ Աղամեան,  
Իսթ Փրավիտէնա՝ Միխիթար Շահինեան, Իրի՝ Ղա-  
զար Մեծիկեան, Իսթ Սթ. Լուիզ՝ Սողոմոն Պողո-  
եան, Արտավազդ Չթչեան, Թուլիտո՝ Գրիգոր Եսայ-  
եան, Լոս Անձելըս՝ Սմբատ Սիմոնեան, Արա Կա-  
կոսեան, Մաննիկ Գրիգորեան, Երւանդ Յովսէփեան,  
Լորենս՝ Յ. Թիւթիւնձեան, Լին՝ Մ. Լուսարարեան,  
Նազիկ Մուշեղեան, Կրանիթ Սիթի՝ Սողոմոն Օլո-  
եան, Հայլենտ Փարք՝ Գէորգ Մ. Գանձանակեան,  
Աւետիս Խանձեան, Հարթֆըրտ՝ Ազնիւ Թիւթիւնձե-  
ան, Մէլբիւրնէյլ՝ Լեւոն Գարբիէլեան, Հոփվէլ՝  
Արմէն Գամաչեան, Միլուքի՝ Մերինէ Գանձանակ-  
եան, Մետֆըրտ՝ Ասատուր Թարգիսեան, Նիակարա  
Փոլս՝ Առաքել Յովսէփեան, Ն. Ե. Տաուն Թաուն՝  
Կարապետ Միրիճանեան, Նիւ Պրիթէյն՝ Նազարէթ  
Ղուկասեան, Շիքակո՝ Լեւոն Մարտիրոսեան, Չա-  
րուհի Դերձակեան, Հայկ Պարօթիզյանեան, Չլսի՝

Միհրան Լերեան, Պոսթոն, Սողոմոն Մալեմէզեան, Պրոնքս Ն. Ե.՝ Մկրտիչ Պաղտատեան, ՊըՖալօ՝ Մ. Մէյնազարեան, Սան Ֆրանչիսկո՝ Գրիգոր Աւագեան, Սառեթ Միլոքի՝ Արամ Չորպաճեան, Սեբմա՝ Վեհանուշ Ասատուրեան, Սփրինկֆիլտ՝ Ներսէս Փիլիկեան, Ուայթինգվիլ՝ Մամբրէ Թորոտեան, Ուաշինկթըն Հաթս Ն. Ե.՝ Արսէն Չոլաքեան, Ուստըր՝ Մինաս Չամանիկեան, Յովհաննէս Սարգիսեան, Վո. Թըրթաուն՝ Էֆթիկ Գարակէօզեան, Տէլլէյ՝ Բագրատ Վարդանեան, Սարգիս Սարոյեան, Բիւզանդ Տէրտէրեան, Տիրպորն՝ Մարիամ Թէմուրեան, Ադասի Սոսերեան, Արտաշէս Ասատուրեան, Բլաք Փարք՝ Արմենակ Գուրգճեան, Բէյսիլն՝ Արսէն Քեթիպեան, Փուլթաքէթ՝ Արաքսի Նշան, Փրավիտէնա՝ Տ. Գալստեան, Փոնթիաք՝ Տրդատ Գրիգորեան, Յիլատելֆիա՝ Ղեւոնդ Յակոբեան, Հայկ Յովսէփեան, Գրիգորիս Պոհճեւեան, Յրեզնո՝ Արիստակէս Պաղտիկեան, Արամ Ազնաւոր, Չաքար Մուշեղեան, Ներսէս Չաւտարեան: Կեդրոնական Վարչութեան ձայնը կը ներկայացնէր Ընկ. Ա. Իգնատիոսեան:

Եղբայրական կազմակերպութիւններէ պատգամաւորներ. — Հայ Պետ. Կարմիր Խաչ՝ Ընկերուհի Վ. Մովիկեան, Բանուրի Բարեկամներու Միութիւն՝ Պատրիկ Սելեան, Թոմարզայի Միացեալ Ընկերութիւն՝ Լեւոն Պոյաճեան:

Համագումարը որոշեց՝ ընտրելու եւ ընտրելու իրաւունք տալ բոլոր եղբայրական կազմակերպութեանց ներկայացուցիչներուն:

Ընտրուեցաւ 7 հոգիէ բաղկացեալ Նախագահութիւն մը, հետեւեալ ընկերներէ. — Արամ Ազնաւոր, Լեւոն Մարտիրոսեան, Հայկ Յովսէփեան, Պատրիկ Սելեան, Մկրտիչ Պաղտատեան, Գրիգոր Աւագեան եւ Ներսէս Փիլիկեան:

Նախագահութիւնը պիտի վարէ Համագումարը, իր մէջէն ընտրելով ժողովի ատենապետը, իւրաքանչիւր նիստի համար, պիտի դասաւորէ ժողովի հարցերը եւ պիտի պատրաստէ բանաձեւերը:

## ՆԻՍՏ ԵՐԿՐՈՐԴ

Ողջոյնի հեռագրեր կարդացուեցան ՀՕԿ-ի Ասթորիայի նորակազմ մասնաճիւղէն, Արաբկիրի Միութեան Կեդրոնական Վարչութեանէն, ՊՀԿԽ-ի Տասներկրորդ Համագումարէն եւ ընկ. Լեւոն Գազանճեանէն:

Նախագահութիւնը իր մէջէն ընտրեց հետեւեալ յանձնախումբերը. — Բանաձեւերու Յանձնախումբ՝ Լեւոն Մարտիրոսեան, Պատրիկ Սելեան, Բողոքները Բննող Յանձնախումբ՝ Արամ Աղնաւոր, Հայկ Յովսէփեան, Հարցերը Դասաւորող Յանձնախումբ՝ Մըկըրտիչ Պաղտատեան, Գրիգոր Աւագեան:

Հաշուեցնիչ Յանձնախումբի անդամ ընտրուեցան ընկերներ Գրիգոր Աւագեան, Բագրատ Վարդանեան, Մինաս Չամանիկեան, Հայկ Պարտիզպանեան եւ Ադասի Սոսերեան:

Թոմարզայի Միացեալ Ընկերութեան ներկայացուցչի առաջարկով Համագումարը որոշեց հեռագրել Խ. Հայաստանի ժողկոմխորհին, որ Պոլսաբնակ Թոմարզացիներու դէպի Հայաստան ներգաղթը արագացի: Ընկ. Ն. Փիլիկեանի առաջարկով որոշուեցաւ հեռագրի մէջ յիշել նաեւ, որ Պոլսաբնակ Գոշ - Հիսարցիներու դէպի Հայաստան գաղթը շուտընդփոյթ կատարուի:

## ՆԻՍՏ ԵՐԿՐՈՐԴ

Նախագահութեան Թեւադրութեամբ, Կեդրոնա-



կան Վարչութեան զեկոյցի մասին կարծիքներու փոխանակութիւն կատարող ընկերները պիտի զեկուցեն նաև իրենց մասնաճիւղերու գործունէութեան մասին: Վիճաբանութեան մասնակցեցան 21 պատգամաւորներ:

Ընկ. Պայտար եզրափակեց վիճաբանութիւնը, ծանրանալով 204-ի դանդաժային կազմակերպութիւն մը դարձնելու անհրաժեշտութեան վրա եւ ցոյց աւաւ, թէ ինչպէս 204-ի դռները փակ են մնացած աշխատաւոր շարքայիններու առջեւ, որոնք դեռ պատրաստ չեն լիովին ընդունիլ 204-ի գաղափարները. մեր բացասական դիրքով հեռու սլահած ենք աշխատաւորական զանգաճները եւ պատճառ դարձած, որ անոնք ժամանակ մը եւս մնան ազգայնական կազմակերպութիւններու մէջ եւ այդպիսով 204-ի գաղափարներուն ծանօթանալու հնարաւորութենէն զրկւին:

### ՆԻՍ ՉՈՐՐՈՐԴ

Կեդրոնական Վարչութեան զեկոյցի վերաբերմամբ հետեւեալ բանաձեւերը ընդունուեցան.—

1.— 204-ի Յրդ. Համագումարը լսելէ յետո կեդրոնական Վարչութեան զեկոյցը եւ պատգամաւորներու կարծիքները այդ մասին, կ'արձանագրէ շարք մը նւաճումներ, որոնք կատարած են Յրդ. Համագումարի կողմէ երեւան բերած թերութիւններու վերացումով: Առաջնորդելով ինքնաքննադատութեան սկզբունքով, Երդ. Համագումարը կը մատնանշէ.—

1.— Որ 204-ը, որպէս Ո. Հայաստանի բարեկամ կազմակերպութիւն, ակնկալած չափով չէ կրցած ծաւալիլ, հակառակ քաղաքական ու տնտեսական նպաստաւոր պայմաններուն: Համագումարը կը յանաջանդէ յառնջիկա տարի 204-ի մասնաճիւղերու

թիւը բարձրացնել 65-ի, իսկ անդամներու թիւը 2500-ի:

2.— 204-ի դանդաժայնացման խոչոր արդեւք է հանդիսացած կանանց զգալի բացակայութիւնը 204-ի շարքերէն եւ անոր գործօն խմբակներէն: Այս թերութիւնը վերացնելու համար Համագումարը կ'որոշէ, Կեդ. Վարչութեան կից ստեղծել Կանանց Բաժանմունք, որու պաշտօնը պիտի ըլլա կազմակերպել կանանց անդամադրական զէմփէյնները, հրատարակել դրամատիրական երկիրներու եւ Ո. Միութեան կանանց դրութեան մասին գրքոյկներ եւ տալ մասնաճիւղերուն դասախօսութեան համար ուրազձեք այս հարցին շուրջ:

«— Երիտասարդական շարժումը 204-ի կողմէն անտեսած է եղեր մինչեւ 204-ի Երդ. Համագումարը: Ժողովս ուրախութեամբ արձանագրելով Լոս Անճելըսի եւ Փրեզնոյի մէջ Համագումարի նախօրեակին Կրտսերաց Լիկաներ կազմած ըլլալու հանգամանքը, կ'որոշէ, Կեդ. Վարչութեան կից ստեղծել Երիտասարդական Երթման Բաժին, լիազօրելով Կեդ. Վարչութիւնը, ի պահանջել հարկին, երիտասարդ կազմակերպիչ մը նշանակել (Անգլիախօս): Երիտասարդաց բաժնի պարտականութիւնը պէտք է ըլլա.— 1.— Կազմակերպել Անգլերէն դասախօսութիւններ, 2.— Հայթայթել Որհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու մասին հրատարակութիւններ, 3.— Հրատարակել Ո. Հայաստանի մասին Անգլերէն գրքոյկներ, 4.— Համախմբել երիտասարդութիւնը Ո. Հայաստանի շուրջ, Սփորթի, Թատերախմբերու, Երգչախմբերու միջոցով, որոնք լաւագոյն կերպով կ'օգտագործւին ազգայնական կազմակերպութիւններու կողմէ, երիտասարդութիւնը նախնապաշարելով Որհրդային կարգերու դէմ, եւ

այդ անմեղ զբօսանքներու միջոցաւ անոնց երակներուն մէջ ներարկելու ազգայնական եւ կղերապագայանողական գաղափարներ :

Յարաբերութիւն մշակել ազգայնական, յետադիմական խումբերու հետ եւ անոնց մէջ կազմակերպուած երիտասարդութիւնը ազատել յետադիմականներու աղռեցութենէն :

Քաջալիրական երեւոյթ պէտք է համարել Րէյսի-նի մէջ Հոկտեմբերիկներու կազմութիւնը :

Համազումարը պարտք կը լինէ բոլոր մասնաճիւղերուն վրա, որպէսզի ջանք ի գործ դնեն իրենց դադութիւններուն մէջ, առաջացնելու Հոկտեմբերիկներու խմբեր եւ այսպիսով կազմակերպական ցանցին մէջ առնելու գաղութի բաղկացուցիչ բոլոր տարրերը :

4.- ՀՕԿ-ի ծաւալման համար խոշոր արգելք պէտք է նկատել ՀՕԿ-ի առանձնացումը զանգաւածներէն : Այդ առանձնացումը ամենէն աւելի կը շեշտուի անով, որ ՀՕԿ-ի անդամները, թիչ բացառութեամբ, կամ երբէք, չեն անդամակցած հասարակական կազմակերպութիւններուն ու գործօն դեր բնաւ չեն վերցուցած անոնց մէջ :

Համազումարը անհրաժեշտ կը գտնէ ՀՕԿ-ի անդամներու անդամակցութիւնը այս կարգի կազմակերպութեանց մէջ եւ պարտք կը լինէ անոնց վրա գործօն մաս վերցնելու անոնց աճման եւ զարգացման աշխատանքներուն մէջ, որ դրական միջոց մըն է այդ կազմակերպութեանց մէջ համախմբուած զանգուածներուն հասնելու :

Հարեանակցական միութիւններու մէկ մասը իրապէս գոյութիւն չունին որպէս կազմակերպուած մարմին : Այս երեւոյթէն կ'օգտուին Փաշիսթական ազգայնական տարրերը, որոնք արգելքներ կը յարուցեն այդ միութիւններու վերակենդանացման : Ուստի,

կը յանձնարարենք, որ մեր մասնաճիւղերը, օգտուելով զանգաւածներու դէպի Ս. Հայաստանը արտայայտած համակրանքէն, ջանան կեանքի կոչել այս կարգի զանգաւածային կազմակերպութիւնները :

ՀՕԿ-ի զանգաւածայնացման համար անհրաժեշտ է նաեւ, որ ՀՕԿ-ի անդամները սերտ յարաբերութիւն ստեղծեն իրենց շրջապատի աշխատաւորներուն հետ, ջանալով զանոնք ներգրաւելու ՀՕԿ-ին :

5.- Հայերէն լեզուի ուսուցման դպրոցները ՀՕԿ-ի ծաւալման աղռակներէն մին պիտի հանդիսանան, որոնք պէտք է կազմակերպուին ՀՕԿ-ին կից, բայց որպէս ուրոյն հաստատութիւններ, որոնք իրենց շուրջը պիտի հաւաքեն ՀՕԿ-ին անդամ չեղող ծնողները, նաեւ բոլոր անոնք, որոնք կը հաւատան փոքրիկներուն հայերէն սորվեցնելու գործին : Պէտք է մասնաճիւղերը լուրջ աշխատանք կատարեն դասարաններ հաստատելու՝ անգրագէտ եւ կիսագրագէտ բանւորներուն համար :

6.- Սորհրդային Հայաստանի իրականութիւնը ծանօթացնող եւ հակախորհրդային կազմակերպութիւններու, առաջին հերթին դաշնակցութեան, հակախորհրդային դաւադրութիւնները հանգամանօրէն մերկացնող գրքոյկներու հրատարակութիւնը անպայման անհրաժեշտութիւն մըն է ՀՕԿ-ի զանգաւածայնացման գործին համար : Նշելով հանդերձ, թէ այս տարի առաջին անգամ ըլլալով ՀՕԿ-ը տուաւ շարք մը հրատարակութիւններ, Համազումարը կը շեշտէ աւելի յաճախակի եւ աւելի կանոնաւոր հրատարակութիւններու անհրաժեշտութիւնը : Այդ հրատարակութիւնները պէտք է բխին դադութեան աշխատաւորութեան անմիջական հրատապ խնդիրներէն :

«Միւսարար»-ի 11-րդ տարեդարձի համարը նկատել նաեւ՝ աշխատելով վերացնել այն թերութիւնները :

րը, որոնք գործւած են այդ թւին մէջ, եւ «Շինարար»ը դարձնել ՀՕԿ-ի երեսնամսեայ տեղեկատուն, որու մէջ միաժամանակ պէտք է տեղ գրաւեն 10. Հայաստանի եւ Խորհրդային Միութեան սոցիալիստական վերելքը եւ բոլոր այն քէմիէյնները, որոնք հերթաբար առաջ կը տարւին ՀՕԿ-ի կողմէ: «Շինարար»ի հրատարակումը առաջին հերթին պիտի ծառայէ ՀՕԿ-ին շուրջ համախմբելու մտաւորականութեան այն մասը, որ վճռական թեքում ցոյց կուտայ դէպի 10. Հայաստան: Եթէ 11-րդ տարեդարձի առթիւ հրատարակած «Շինարար»ի մէջ յօդածներու առատութիւնը աչքի կը զարնէր, դիտելի է, որ դրական – գեղարւեստական բաժնի նիւթերը առանձնապէս արտատպումներ են՝ Խորհրդային դրականութենէն: Ծանօթացնելով Խորհրդային դրականութիւնը, «Շինարար»ը իր շուրջ պէտք է հաւաքէ Ամբրիկահայ մտաւորականութիւնը: Ապա, կարելոր է, որ շարք մը կեդրոններու մէջ – Նիւ Եորք, Ֆիլատելֆիա, Շիքակո, Տիթթոյթ, Պոսթոն, Լոս Անճելես – կազմակերպւէին 10. Հայաստանի համակիր գրողները, բանւորական մամուլի թղթակիցներն ու աշխատակիցները:

7. – Անհրաժեշտութիւն մըն է ներկայիս Ամերիկահայ մասնագէտները եւ դիտնականները կազմակերպելու գործը, անոնց միջոցով 10. Հայաստանին Հայթայթելով դիտական դրականութիւն եւ գործիքներ, ինչպէս նաեւ անոնց միջոցով արձանագրել բոլոր մասնագէտները եւ դիտնականները, որոնք կը փափաքին Հայաստանի սոցիալիստական շինարարութեան օժանդակել՝ հոն երթալով:

8. – Համագումարը ցաւով կ'արձանագրէ այն իրողութիւնը, թէ ՀՕԿ-ի մասնաճիւղերու մեծ մասը անհրաժեշտ ուշադրութիւն չէ ընծայած սարքելու

Ապրիլ 24-ին առթիւ հակապատերազմական ժողովներ խնչպէս Լորէնսի, Հոփվելի եւ Լինի մասնաճիւղերը սարքած են:

Համագումարը կը նկատէ, որ Ապրիլ 24-ի առթիւ բողոքի ցոյցեր կազմակերպելու վերաբերմամբ ՀՕԿ-ի մասնաճիւղերու կողմէ ցուցանակած անտարբերութիւնը որոշ անպացոյց է, թէ տակաւին ՀՕԿ-ը ի վիճակի չէ Հայ դանդաճները շարժման դնելու՝ ի խնդիր 10. Հայաստանի եւ 10. Միութեան պաշտպանութեան: «Այս տեսակէտէն, անհրաժեշտ է մասնաւոր ուշադրութիւն դարձնել մեր կազմակերպութեան քաղաքական գործունէութեան եւ անով հնարաւոր դարձնել հազարաւորներու մասնակցութիւնը՝ սարքած հակապատերազմական ցոյցերուն:

Համագումարը նկատելով, որ կարգ մը մասնաճիւղերու մէջ թիւրիմացութիւն կա ՀՕԿ-ի հակապատերազմական եւ Խորհրդային Հայաստանը ու Խորհրդային Միութիւնը պաշտպանելու ընդթ կրող խորհրդակցական ժողովներուն մասնակցելու եւ անկէ բխող որոշումները գործադրելու մասին, կ'որոշէ, որ ՀՕԿ-ը լինելով ուրոյն կազմակերպութիւն, չի միանար ոեւէ կազմակերպութեան, այլ կը մասնակցի Խորհրդային Միութեան Բարեկամներու կազմակերպութեան (Ֆրէնտզ ալ Մալիթք Եաւնիքն) կողմէ Խորհրդային Միութեան պաշտպանութեան շուրջ հրաւիրած հակապատերազմական խորհրդակցական ժողովներուն եւ ցոյցերուն, գործադրութեան կը դնէ այս խնդրոյ շուրջ ժողովներէն բխող որոշումները:

ՀՕԿ-ը 10. Հայաստանի սոցիալիստական վերելքին հետ կապւած բոլոր քէմիէյններու առթիւ, պիտի գործակցի Պետ. Հայ Կար. Խաչի հետ եւ միացեալ ճակատ պիտի կազմէ 10. Հայաստանի բարեկամ բո-

լոր հասարակական կազմակերպութիւններուն հետ :  
ՀՕԿ-ը ոչ մէկ գործակցութիւն պիտի ունենա Ին-  
թըրնէշընէլ Լէյսլըր Տիֆէնսի, Վորքըրզ Ինթրէրնէ-  
շընէլ Րլիֆի, Արհեստակցական Միութիւններու եւ  
ուրիշ նման կազմակերպութիւններու հետ :

6-րդ Համադումարը կը գնահատէ Կեդրոնական  
Վարչութեան ջանքերը՝ նախորդ տարւան թերու-  
թիւնները վերացնելու համար, որոնց հետեւանքով  
ՀՕԿ-ը ըրած է նկատելի նւաճումներ : 6-րդ Համա-  
դումարը այն վստահութիւնն ունի, որ գալիք Կեդ-  
Վարչութիւնը շարունակելով անցեալ Կեդ-Վարչու-  
թեան նւաճումները եւ վերացնելով դեռեւս նկատ-  
ուող թերիները, ՀՕԿ-ը կը դարձնէ իսկական զանգը-  
ւածային կազմակերպութիւն, մասնաճիւղերու միա-  
համուռ գործակցութեամբ :

Հարցերը դասաւորող յանձնախումբը ներկայա-  
ցուց հետեւեալ օրակարգը .-

1.- Երջանային Մարմիններու կազմութիւն

2.- Քանաւայի Երջանը կազմակերպելու հարց

3.- Համագումարի Ժամանակի փոփոխում

4.- Հաշւապահական ձեւ մասնաճիւղերու  
համար

5.- ՀՕԿ-ի Ակումբներ

6.- Պարբերաբերքի մը հլատարակութիւնը

7.- Ընկ. Խ. Քեօւէեանի հարց

8.- Հաշւեֆնիչ Յանձնախումբի գեկոյց

9.- Բանաձեւերու Յանձնախումբի գեկոյց

10.- ՀՕԿ-ի Կեդրոնավայրը փոխադրել

Տիբրոյք

11.- Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն

12.- Տարեկան Պիտնէ

13.- Արագած Արտել եւ ՀՕԿ

14.- Արտասահմանի ՀՕԿ-երու Համագումար

## ԼՈՒԾՈՒՄ

1.- Երջանային Մարմիններ .- Որոշեցաւ նոր  
Երջանային Մարմիններ չ'ստեղծել :

2.- Քանաւայի Երջանը կազմակերպել .- Միա-  
ձայնութեամբ որոշեցաւ, որ նորընտիր Կեդրոնա-  
կան Վարչութիւնը յաջորդ շրջանի ընթացքին մաս-  
նաւոր քայլեր առնէ Քանաւայի շրջանը կազմակեր-  
պելու համար :

3.- Համագումարի Ժամանակի Փոփոխում .- Նը-  
կատի ունենալով, որ ամառը շատ աւելի դիւրու-  
թիւններ եւ յարմարութիւններ ունի պատգամաւոր-  
ներու ճամբորդութեան համար, որոշեցաւ համա-  
դումարը ընել ամառւան երեք ամիսներու ընթացքին :

4.- Հաշւապահական ձեւ .- Նկատելով որ շարք  
մը մասնաճիւղեր կանոնաւոր հաշիւ չեն կարողացած  
պահել, որոշեցաւ գործածել նախկին Կեդրոնական  
Վարչութեան ներկայացուցած հաշւապահական  
տետրակի ձեւը, որ Կեդրոնի կողմէ պիտի զրկւի  
մասնաճիւղերուն : Որոշեցաւ նաեւ գործածել կրկ-  
նակ ստացադրեր մասնաճիւղերու բոլոր մուտքերուն  
համար : Այս ստացադրերը եւս պիտի հայթայթւին  
Կեդրոնական Վարչութեան կողմէ :

5.- ՀՕԿ-ի Ակումբներ .- Նկատելով, որ նախորդ  
համադումարները այս մասին արդէն որոշումներ  
անցուցած են, Համադումարը նկատեց, որ մինչեւ  
այժմ կազմուած ակումբներու մեծամասնութիւնը ըս-  
պառած են ՀՕԿ-ի մասնաճիւղերու հասոյթները : Հա-  
մադումարը որոշեց ակումբները դնել անդամակցու-  
թեան հիմերու վրա, եւ անդամակցելու լայն պատե-  
հութիւն տալ բոլոր անոնց, որ Խ. Հայաստանի բա-

րեկամ են : Ակումբներուն մէջ դաստիարակչական գործ կատարել, տալով անոր հսկողութիւնը մասնաճիւղերուն :

6.- Հրատարակութիւններ.- Որոշեցաւ նախագիտ ընդունեալ բանաձեւին վրա աւելցնել նաեւ հետեւեալ Հրատարակութիւնները.- 1. Կղերա-Փաշխատական հասանքներու մոլորեցուցիչ աշխատանքներուն դէմ, որ պարունակէ ամփոփ կերպով ՀՕԿ-ի սկզբնաւորութենէն մինչեւ օրս կատարեալ աշխատանքները, 2. Պրոչիւրներ՝ Խ. Հայաստանի աշխատաւորութեան վերջին տարիներու ընթացքին ձեռք բերած յաջողութիւններու մասին, ինչպէս նաեւ տեղեկութիւններ՝ մասնագէտներու եւ որակեալ բանուորներու համար, որոնք կը փախաքին Հայաստան երթալ, 3. Խ. Հայաստանի Գրական եւ Գիտական Դէմքերու կենսագրականը եւ անոնց գործերու մասին ծանօթութիւններ՝ դրքի ձեւով :

7.- Ընկ. Խ. Քէօսէեանի Խնդիրը.- Ընդունեցաւ հետեւեալ բանաձեւը.- «Պատգամաւորական Ժողովս լսելով ընկ. Խ. Քէօսէեանի մասին եղած գանդատները, բողոքները, եւ պատգամաւորներու ամենալայն լուսաբանութենէն յետո, կը վաւերացնէ Կեդրոնական Վարչութեան Կազմակերպչական Յանձնախմբի որոշումը, թէ ընկ. Խ. Քէօսէեանի ունեցած յարաբերութիւնը ընկերուհի Թաշճեանի հետ նկատել անհատական գործ, եւ սակայն զինքը յետո կոչել որպէս գործիչ ու խստիւ քննադատել՝ իր ժամանակաշրջանի լրանալէն առաջ Քալիֆորնիո շրջանը ձգելուն, եւ այսպիսով իր անհատական գործը ՀՕԿ-ի գործին հետ խառնելով՝ կազմակերպական կարգապահութիւնը խախտելուն համար» : Այս բանաձեւը ընդունեցաւ 13-ի դէմ 48 ձայնով, երեք պատգամաւորներ

այդ նիստէն կը բացակայէին :

8.- Հաշտեցնիչ Յանձնախումբը Զեկոյց հետեւեալ կերպով.- «ՀՕԿի 6-րդ Համագումարի Հաշտեցնիչ Յանձնախումբս քննելով Կեդ. Վարչութեան 1931 - 1932 շրջանի բոլոր Ֆինանսական գործառնութիւնները, գտաւ, որ հաշտապահական ձեւը եղած է համաձայն արդիական հաշտապահութեան :

«Հաշտեցնութեան ընթացքին գտնեցաւ, որ ընդհանուր գործառնութիւնը եղած է 66,239 տոլար 33 սէնթ, որուն մէջ կը մտնեն ՀՕԿ-ի կազմակերպական մուտքը, ինչպէս նաեւ այն բոլոր գումարները, որոնք ստացւել են հասարակական կազմակերպութիւններէ եւ անհատներէ Խ. Հայաստան փոխադրուելու եւ կամ զանազան գնումներ կատարելու նպատակով : Մուտքի եւ ելքի բոլոր արգարացուցիչ փաստաթղթերը անեղծ վիճակի մէջ պահուած էին, որոնք մեծապէս նըպաստեցին հաշիւներու քննութեան գործին : ՀՕԿ-ի այս շրջանի կազմակերպական մուտքի գումարը եղած է 4068 տոլար 34 սէնթ, իսկ ելք եղած է 8478 տոլար 19 սէնթ : Այս ելքը կը պարունակէ անցեալ շրջանէն մնացած 1125 տոլարի պարտքի վճարում մը ինչպէս նաեւ այս շրջանէն 910 տոլար 25 սէնթի վճարելի պարտք մը : Այսպիսով մեր այս շրջանի բացը կը հասնի 4409 տոլար 85 սէնթի : Այս գումարը կը պարտինք ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութեան, ընկերներ Յ. Պայտրեանին եւ Խ. Քէօսէեանին :

«Կազմակերպական ելեմուտքի միջեւ եղած այս տարբերութիւնը երեւան կը բերէ թերիներ, որոնք սրբազրելու համար հետեւեալները կը թելադրենք.-

1.- Ունեալ հաւասարակշռում պիտուէ :

2.-Կրճատել վնասեալ պաշտօնեաներու բոշակը

3.- կրճատել, ըստ հնարաւորութեան, բոլոր միւս ծախսերը:

«Յանձնախումբս գտաւ, որ զանազան հասոյթներ անհամապատասխան են եղած ծախսերուն, ինչպէս Ֆիլմի ցուցադրութիւնը, որու համար ելք եղած է 420 տոլար 57 սէնթ, իսկ մուտք՝ 256 տոլար 74 սէնթ, զուտ վնաս՝ 163 տոլար 83 սէնթ: Մինչդեռ Յիլմերէն պէտք էր ստացէր եռապատիկ շահ մը:

«Անդամատուրքերը կը համապատասխանեն յայտարարուած անդամներու թւի 45 տոկոսին: Սա ցոյց կուտայ, թէ անդամներու մեծամասնութիւնը, գործադրկութեան պատճառով, անդամատուրք վճարելէ ազատ են կացուցուած:

«Գրականութեան բաժինն ալ ցոյց կուտայ, թէ եղած ծախքերուն համապատասխան գրականութիւն ծախուած չէ, որ արդիւնք է մասնաճիւղերու կողմէ ցոյց տրուած անփութութեան:

«Այս տարեշրջանի ընդհանուր ելեմուտքէ մնացած գումարն է 5932 տոլար 89 սէնթ, որ պահ դրուած է դրամատան մէջ եւ կը պատկանի անհատներու ու կազմակերպութիւններու»:

9.- Բանաձեւերու Յանձնախումբի Զեկոյց.- Այս յանձնախումբը ներկայացուց հետեւեալ բանաձեւերը.-

Ա.- Պատերազմի վտանգը եւ Խորհրդային Միութեան Պաշտպանութեան Հարցը.- «ՀՕԿ-ը ըլլալով Խ. Հայաստանի շինարարութեան ստտարող կազմակերպութիւն, չի կարող անտարբեր մնալ կացութեան մը առջեւ, որ օր առօր սուր հանգամանք կ'ստանա եւ կ'սպառնա ոչնչացնել ոչ միայն կուլտուրական, տնտեսական եւ ընկերային կեանքի

մէջ ձեռք բերուած յաջողութիւնները, այլ մեր սիրած աշխատաւորական կառավարութեան գոյութիւնը:

«Նկատի ունենալով, որ հակա-Սորհրդային կազմակերպութիւնները, մեզ նման աշխատաւորները դործիք դարձնելով, իրենց ամբողջ ժամանակը տրամադրած են Խ. Միութիւնը հարուածելու,

«Նկատի ունենալով դարձեալ, որ մեզ պէս խորհող եւ մեզ պէս նպատակներ հետապնդող կազմակերպութիւններ կան, որոնք նւիրուած են Խ. Միութիւնը ծանօթացնելու եւ անոր վերելքին նպաստելու գործին,

Եւ զիտակցելով, որ Խ. Հայաստանը անբաժան մէկ մասնիկն է Խ. Միութեան, հետեւաբար, Խ. Միութեան դէմ ուղղուած ոեւէ պատերազմ, աւերում մէջ զերծ չի կրնար թողուլ Խ. Հայաստանը.- Ուստի ՀՕԿ-ի 6-րդ Համագումարը անմիջական հարց կը նկատէ Խ. Միութեան պաշտպանութեան հարցը եւ կը հրահանգէ մասնաճիւղերը, որ մասնակցին Խ. Միութեան պաշտպանութեանը նւիրուած տեղական եղբայրական կազմակերպութիւններու սարքած ժողովներուն ու ցոյցերուն, եւ գործադրել ջանան տրուած որոշումները, նկատի ունենալով տեղական պայմանները:

«Միւսնոյն ատեն փրոփակահատային աշխատանք կատարել Ամերիկահայ աշխատաւորութեան մէջ, միտքերը լուսաբանելու, հաստատապէս գիտնալով, որ Սորհրդային կարգերու սպառնացող վտանգը բուն իսկ համաշխարհային աշխատաւորութեան, հետեւաբար եւ Հայ աշխատաւորութեան գոյութեանը սպառնացող վտանգ է»:

Բ. — Զանգւածային Պատուիրակութիւն Մը Դէպի  
Խ. Հայաստան. — «Ամերիկայէն զանգւածային  
պատուիրակութիւն մը զրկել ղէպի Խ. Հայաստան,  
որ բաղկանա ՀՕԿ-ի, Պետ. Կարմիր Խաչի եւ ուրիշ  
հասարակական կազմակերպութիւններու մէկ մէկ  
ներկայացուցիչներէն, պատկանեալ կազմակերպու-  
թեանց ծախսերով:

«Այնպէս կարգադրել, որ սոյն պատուիրակու-  
թիւնը ճամբա ելլէ Սեպտեմբերին՝ ամիսի մը չափ  
Խ. Հայաստանի մէջ մնալով՝ իր իսկ աչքերով տես-  
նէ հոն կատարած շինարարական աշխատանքները  
եւ տեղեկագրութիւններ պատրաստէ: Յետո անց-  
նելով Մոսկվա, ներկա ըլլա Նոյեմբերեան տօնա-  
կատարութեանց եւ վերադառնա Ամերիկա Գեկ-  
տեմբերի մէջ, Խ. Հայաստանի 12-րդ տարեգարձի  
տօնակատարութեան ժողովներուն մէջ իր ականա-  
տեսի տպաւորութիւններուն մասնակից դարձնէ  
գաղութահայ զանգւածները եւ խօսնակառութիւն  
ստեղծելով, սատարէ ՀՕԿ-ի զանգւածայնացման  
խիստ կարեւոր գործին:

«Նոյն այդ ականատեսի տպաւորութիւնները  
պրոչիւրներու ձեւով հրատարակ դրւին աւելի լայ-  
նօրէն ծանօթացնելու Խորհրդային Հայրենիքը՝ գա-  
ղութահայութեան:

«Խնդրել Գլխաւոր Վարչութեանէն, որ պատուիրա-  
կութիւն մը զրկէ Խ. Հայաստանէն մէկ կամ աւելի  
անձերէ բաղկացեալ, որ առնւաղն վեց ամսուան շըր-  
ջան մը կատարէ Ամերիկայի մէջ, այցելելով հայա-  
բնակ քաղաքներ եւ տնտեսական տաքնապի պատ-  
ճառով յուսալքած գաղութահայութեան յոյս ներ-  
շնչէ եւ աւելի ամուր կապերով կապէ զայն Խոր-  
հրդային Հայրենիքին հետ»:

Գ. — Ներգաղթ. — «Խորհրդային Հայաստանի  
տնտեսական վերելքը աննախընթաց հնարաւորու-  
թիւն կընծայէ Խ. Կառավարութեան, կազմակեր-  
պելու զանգւածային ներգաղթ այն գաղութներէն,  
ուր Հայ գաղթական աշխատաւորութիւնը ենթարկ-  
ւած է անասելի թշուառութեան, շնորհիւ տիրող  
տնտեսական տաքնապի:

«ՀՕԿ-ի Ամերիկայի Շրջանի 6-րդ Համագումար-  
ը վաւերացնելով պաշտօնաւարտ Կեդրոնական  
Վարչութեան առած քայլը, Ներգաղթի Ամերիկայի  
Յանձնախումբի կազմակերպումին վերաբերմամբ,  
որի նպատակն է իր մէջ միացնել Խ. Հայաստանի բա-  
րեկամ հասարակական կազմակերպութիւնները, օ-  
ժանդակելու համար սկսած Ներգաղթին ու անոր  
յարակից շինարարութեան, կ'որոշէ, հրահանգել իր  
մասնաճիւղերը եւ անդամները. — 1. Առաջին պատե-  
հութեամբ նախաձեռնել իրենց քաղաքին մէջ տեղա-  
կան յանձնախումբ մը կազմելու, 2. — Առաջ տանիլ  
«Աւելի շատ բնակարան Խորհրդային Հայաստանի  
մէջ, կը նշանակէ աւելի ընդարձակ Ներգաղթ» նշա-  
նաբանը եւ օժանդակել 50,000 տոլարի հանգանակու-  
թեան աշխատանքին»:

Դ. — Արտագաղթ. — «Հայ հակա-խորհրդային  
կազմակերպութիւններ՝ դաշնակ, հնչակ, ռամկավար  
եւ այլ կղերա-պահպանողական տարրեր, տարած  
դրամատիրական եւ նւաճողական ձգտումներով, ղէմ  
են Հայ գաղթականներու ներգաղթին՝ ղէպի Խ. Հա-  
յաստան:

«Անոնք, համոզւած ըլլալով, որ արտասահմանի  
աշխատաւորներու եւ բանւորներու գաղթով պիտի  
զրկւին այդ զանգւածներու արիւնը սակարկելու պա-  
տեհութեանէն, ամէն ջանք ի գործ կը դնեն, որպէսզի

արտասահմանի մէջ թշուառացած եւ յուսալքութեան աստիճանին հասած Հայ աշխատաւոր գաղթականները հեռու պահեն Ներգաղթէն: Այս նպատակով հազարաւոր տղարներ կը ծախուին Բարեգործականի եւ այլ կազմակերպութիւններու կողմէ, Սուրբիո մէջ հաստատելու հայ գաղթականները: Լրագրական տեղեկութեանց համաձայն, իրենց տան վարձքը վճարելու անկարող հարիւրաւոր հայ ընտանիքներ իրենց տուներէն բռնի արտաքսուած են Ազգ. Դաշնակցութեան Պէյրութի գաղթականներու տեղաւորման Պիւրոյի կողմէ:

«ՀՕԿ-ի 6-րդ Համագումարը կոչ կընէ Խ. Հայաստանի բոլոր բարեկամներուն, որոնք Հայ գաղթական աշխատաւորութեան շահը կը նկատեն իրենց սրտին մօտ, որպէսզի ամէն միջոց ձեռք առնեն դադրեցնելու այս հակահայաստանեան աշխատանքները, եւ օժանդակելու մեր կառավարութեան, որ աւելի խոշոր թւով գաղթականներ տեղաւորելու հնարաւորութիւնը ունենա: Միւս կողմէ պահանջելու է բոլոր հասարակական կազմակերպութիւններէն, եւ մասնաւորապէս Բարեգործականէն, որ իրենց տրամադրութեան տակ գտնուող հսկայական գումարները գործադրեն յօգուտ Խորհրդային Հայրենիքի վերաշինութեան եւ աշխատաւոր գաղթականներու տեղաւորման:

«Այս նպատակով, Համագումարը կը հրահանգէ իր մասնաճիւղերը եւ անդամները, որ ուժեղացնեն Խ. Հայաստանը արտասահմանեան Հայ աշխատաւորութեան ծանօթացնելու ջանքերը, եւ մասնաւոր ուշադրութիւն դարձնեն մերկացնելու հակահայաստանեան ներգաղթի թշնամիները:

Ե. — «Բանուր»ը. — «ՀՕԿը՝ յանձին «Բանուր»ի՝ կը գտնէ գնահատելի աջակից մը Խ. Հայաստանի կատարած ընկերային, տնտեսական եւ մշակութային նաւաճումները ու ՀՕԿ-ի գործունէութիւնը աշխատաւորական զանգուածներուն լայնօրէն ծանօթացնելու գործին մէջ:

«ՀՕԿ-ի 6-րդ Համագումարը խորապէս գնահատելով «Բանուր»ի կատարած դերը, կը հաւատայ, թէ «Բանուր»ի տարածումը պիտի նպաստէ ՀՕԿ-ի զանգուածայնացման»:

Համագումարը միաձայնութեամբ ընդունեց վերեւ գրուած բոլոր բանաձեւերը:

10. — ՀՕԿ-ի կեդրոնակայքը փոխադրել Տիֆլիզ. Այս հարցի քննութենէն վերջ՝ Ժողովը մեծամասնութեամբ որոշեց Կեդրոնը պահել Նիւ Եորքի մէջ:

11. — Կեդրոնական Վարչութեան Ընտրութիւն. — Համագումարը որոշեց, որ յաջորդ Կեդրոնական Վարչութիւնը բաղկանա 11 անդամներէ եւ 3 թեկնածուներէ:

Ընտրեցան Ընկերներ Յ. Պայտարեան, Աբրահամ Միրիճանեան, Լեւոն Գաղանճեան, Արսէն Չոլազեան, Մկրտիչ Պաղտատեան, Պատրիկ Սելեան, Տք. Գրիգորիս Պոհճէլեան, Նշան Քէօսէեան, Հայկ Քարամեան, Ներսէս Փիլիկեան, Արամ Բազրատունի, Իսկ թեկնածուներ՝ Կարապետ Միրիճանեան, Եղիշ Տէնպաղեան, Ա. Աբրահամեան:

Կեդրոնական Վարչութեան հեռաւոր եւ խորհրդատու անդամներ ընտրեցան՝ Փրօֆ. Տ. Հ. Գապագճեան, Կ. Միտալ՝ Ֆիլատելֆիայէն, Փրօֆ. Յ. Մ. Տատուրեան՝ Հարթֆըրտէն, Տօք. Ա. Ահարոնեան՝ Լինէն, Յ. Բարեջանեան՝ Պոսթոնէն, Ա. Ազնաւոր՝ Տիֆլիզէն, Տօք. Ա. Իգնատիոսեան՝ Շիքակոյէն,



Արաէն Երեցեան՝ Լոս Անճելլոսէն, ՓրօՓ. Լ. Արծրու-  
նի՝ Յրեզնոյէն, Պ. Պետրոսեան՝ Բիտլիէն, Ա. Ա-  
զամեան՝ Սան Յրանսիսքոյէն:

12. — Տարեկան Պիւտնէ. — Համագումարը իւրա-  
ցուց տարեկան ելեմուտքի Նախահաշիւ մը, որ ներ-  
կայացած էր պաշտօնաւարտ կեդրոնական Վարչու-  
թեան կողմէ, հետեւեալ կերպով.

ՄՈՒՏՔ	ԵԼՔ
Տուրքերէ	2000
Հանդէսներէ	1500
Ֆիլմերէ	3500
Ձեռնարկներէ	2800
	Գրասենեակի վարձք 420
	Գրասենեակի վարձք 90
	Գրքով, հեռգիր 150
	Գրասենկ. ծախսեր 50
	Տպագրական 120
	Ճանապարհածախս 300
	Քարտուղար 1560
	Գործիչ 1560
	Շարժանկարի ծխ. 1600
	Գործավար 1560
Գումար	9800
Գումար	8355

Մնացեալ 1445 տուարի գումարը պիտի յատկաց-  
ւի Գլխաւոր Վարչութեան մեր ունեցած պարտքին:  
Այս որոշումով, ՀՕԿ-ի պաշտօնեաներու շարժա-  
վճարները կը ճատուեցան 30ական տուարի:

13. — Արագած Արտէլ եւ ՀՕԿ. — «Արագած Արտէ-  
լ»-ը թեքնիքական հողի վրա կազմուած՝ Սորհրդային  
Հայաստանի Կառավարութեան կողմէ վաւերացած  
համագործակցական կազմակերպութիւն մըն է, որ

նպատակ ունի Ամերիկահայ որակաւոր արհեստա-  
ւորներու փորձառութիւնով Խ. Հայաստանի վերել-  
քին սատարել: ՀՕԿ-ի 6-րդ Համագումարը Կեդ.  
Վարչութեան եւ մասնաճիւղերու վրա պարտակա-  
նութիւն կը դնէ անվերապահօրէն աջակցելու Արա-  
զած Արտէլի գործունէութեան ծաւալման, եւ միեւ-  
նոյն ատեն լուսարանելու հետաքրքիր աշխատաւ-  
որութիւնը Սորհրդային իրաւակարգի մասին, որպէս  
զի ան՝ գիտակցաբար եւ աւելի մեծ չափերով իր  
թեքնիքական կարողութիւնները ի սպաս դնէ Սոր-  
հրդային Հայրենիքի վերելքին սատարելու նւիրա-  
կան գործին»:

Համագումարը իր աշխատանքները լրացուցած  
ըլլալով, ողջերթի ուղեբճներ ըրին ընկերներ Հայի  
Յովսէփեան, Տօք. Ա. Իգնատիոսեան, Ներսէս Փի-  
լիկեան, Ա. Չորագեան, Սողոմոն Օվոյեան եւ Վե-  
հանուշ Ասատուրեան, որմէ յետո բոլոր պատգա-  
մաւորներու մասնակցութեամբ Խ. Հայաստանի  
պաշտօնական երգի. — «Միջազգայնական»-ի երգե-  
լով ժողովը փակեցաւ:

Համագումարի Քարտուղար

ՆԵՐՍԷՍ ՓԻԼԻԿԵԱՆ Նախագահութիւն

Մ.Ր.Մ. Ա.Չ.Ն.Ա.Ռ.Ր, ԼԵՒՈՆ ՄԱՐ-  
ՏԻՐՈՍԵԱՆ, ՀՍՅԿ ՅՈՎՔԵՓԵԱՆ,  
ՊԱՏՐԻԿ ՍԵԼԵԱՆ, ՄԿՐՏԻՉ ՊԱՂ-  
ՏԱՏԼԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ԱՒԱԳԵԱՆ



«Ազգային գրադարան



NL0221787

աթ 1

900 1

---

ՏՊԱՐԱՆ «ԿՈՌԻՆԿ»Ի

ՖԻԼՍՏԵԼՖԻԱ

ՓԷՆՍԻԼՎԱՆԻԱ

---